

10 օրից ավելի է՝ Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի մոտ 50 հորատողներ գործադուլ են անում՝ պահանջելով աշխատավարձի ավելացում: Նրանց փոխարինելու համար տնօրինությունը մոտ 20 հնդիկ է բերել, տեղավորել Փոքր Այրում գյուղի հյուրատանը, սակայն դեռ չեն աշխատեցնում: Կոմբինատի տնօրենը Վահե Մաքսիմի Հակոբյանն է:

Կարդացեք՝ էջ 4

Փաշինյանին մի քանի խորհուրդ տանք, որը կօգնի ավելի շատ մարդ հավաքել եւ ավելի մեծ հանրային աջակցության տպավորություն ստեղծել: Նա կարող է Հանրապետության հրապարակում կազմակերպել չալաղաջի, քյաբաբի, շաուրմայի փառատոներ եւ մանղալի մոտ խորովածի շիշը պտտեցնելով՝ կարող է ասել. «Հեղափոխությանն ասում եմ «այո»»:

Կարդացեք՝ էջ 5

Հայ-էքստրիմը վայելելու համար բոլորովին էլ պարտադիր չէ բարձրանալ Կիլիմանջարո, Էլբրուս կամ անցնել մեռած կանյոններով, օձառատ ավազուտներով ու անմարդաբնակ վայրերով: Դրա համար ընդամենը պետք է այցելել էքստրիմի երկիր Հայաստան, տեղավորվել ցանկացած քաղաքի կամ գյուղի հյուրանոցում, հանգրվանում եւ սպասել:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 7 (4122), 29 հունվար, հինգշաբթի, 2026

www.hraparak.am

Չնայած ընդդիմադիր Նիկոլ Փաշինյանն ԱԺ ամբիոնից ժամանակին շատ հաճախ եւ կոշտ քննադատում էր նախորդ իշխանությունների սկսած՝ համայնքների խոշորացման նախաձեռնությունը, հայտարարելով, որ այդ քայլով «գյուղերը տանում ենք ամայացման ու մահացման», սակայն իշխանության գալով՝ ոչ միայն շարունակեց նրանց ծրագիրը, այլեւ խոշորացված համայնքները կրկին ու կրկին է խոշորացնում՝ հարմարեցնելով իր կադրային բանկին: Օրինակ, Էջմիածինը միացրեց Խոյի հետ, որ Արգիշտի Մեխակյանին կարողանա համայնքապետ դարձնել: Հիմա էլ շրջանառության մեջ է դրվել նախագիծ, որով հերթական խոշորացումն են նախատեսում՝ ձեւավորելով հետեւյալ նոր համայնքային փնջերը. Լոռու մարզի Ստեփանավան, որում կներառվեն Ստեփանավան, Գյուլագարակ եւ Լոռի Բերդ համայնքները՝ իրենց 20 բնակավայրով: Սյունիքի մարզի Գորիս համայնք, որում կներառվեն Գորիս, Տաթեւ եւ Տեղ համայնքները՝ 28 բնակավայրով: Վայոց Ձորի Եղեգնաձոր համայնք՝ Եղեգնաձոր, Արենի եւ Եղեգիս համայնքները՝ 32 բնակավայրով: Այսինքն, ծրագրում ընդգրկված է 9 համայնք, 80 բնակավայր, որոնց միավորման արդյունքում կձեւավորվի 3 համայնք: Միավորումից հետո, բնականաբար, կանցկացվեն նոր ընտրություններ, կնշանակվեն նոր համայնքապետեր: Թեպետ նախագծում չկան ժամկետներ, սակայն իշխանական աղբյուրներն ասում են՝ ընտրությունները կլինեն աշնանը: Ակնհայտ է, որ հատուկ հաշվարկել են խոշորացումը եւ ունեն ֆավորիտ թեկնածուներ՝ վստահ, որ հունիսին կվերարտադրվեն, ապա ողջ երկիրն իրենցով կանեն:

Գրել էինք, որ պետական համակարգում պարգեւավճարների երկրորդ փուլն է սպասվում, քանի որ պիլոտային ծրագրի շրջանակներում դեկտեմբերին բարձրաստիճան պաշտոնյաներին բաժանված միլիարդավոր պարգեւավճարները միայն 2025-ի առաջին կիսամյակի համար են տրվել, երկրորդ կիսամյակի գումարները, ըստ ամենայնի, բաժանվելու են մոտ օրերս: Մի քանի գերատեսչություններից տեղեկություններ ենք ստացել, որ վարչության պետերը, նրանց վերադասներն արդեն ցուցակագրումներ են անում, իբրեւ թե աշխատակիցների աշխատանքի արդյունավետության ինդեքս որոշում, իրականում՝ յուրայիններին ու հնազանդներին են կաշառելու: Այս աժիոտաժը խլրտոց է գցել պետական ապարատի ստորին օղակներում, որոնք զրկված են այս պետական կաշառքից օգտվելու հնարավորությունից եւ հիմա ավելի քան մարտական են տրամադրված՝ եթե այս անգամ էլ իրենց դուրս թողնեն կամ գրոշներ տան, իսկ բարձր պաշտոններ զբաղեցնող ՔՊ-ականներին միլիոններ տան, չեն լռելու:

Ի՞նչ է պատահել

Իշխանության ներկայացուցիչները ստում են այնպես, ինչպես շնչում են: Իրական փաստերն ու առարկությունները նրանց բախվելով որպես խուլ պատ՝ հետ են շպրտվում: Որովհետեւ իշխանության ներկայացուցիչներից յուրաքանչյուրը նախ քարոզիչ է, կուսակցական գործիչ, ուստի նրանց բոլոր քայլերը տեւական ժամանակ է եւ դեռ էլի շատ ամիսներ ուղղված են լինելու ընտրություններին: Այս իշխանության ներկայացուցիչներն իրենց առաջնորդից ուրիշ բաներ էլ են սովորել: Օրինակ, փաստերը հմտորեն մանիպուլացնելը՝ գլխիվայր շրջելը, իրենց մեղքն ուրիշների վրա բարդելը: Ասենք, ԵԽԽՎ նստաշրջանում ելույթ ունեցող ԱԳ նախարարն ինչո՞ւ պետք է ընտրությունների, ապատեղեկատվության, մարդու իրավունքների մասին խոսի: Եվ բոլոր հարցերին սխալ, սուտ, խեղաթյուրված պատասխաններ տա: Ինչո՞ւ պետք է ԵԽԽՎ-ի նման հզոր կառույցն առաջնորդվի բացառապես իշխանության ղեկին գտնվողների տրամադրած տեղեկատվությամբ՝ ո՛չ ընդդիմությանը լսի, ո՛չ Հայաստանի լրատվամիջոցները մոնիտորինգ անի, ո՛չ հանրային գործիչների եզրահանգումներն ուսումնասիրի: Ինչպես ժամանակին Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ էին հավասարության նշան դնում՝ զոհին հավասարեցնելով ագրեսորի հետ, այնպես էլ հիմա ՀՀ իշխանության եւ Եկեղեցու, ՀՀ իշխանության եւ ընդդիմության միջեւ են հավասարության նշան դնում, ավելին՝ իշխանությանը՝ զոհ, հոգեւորականներին ու ընդդիմադիրներին ագրեսոր հռչակում: Տասնյակ տարիներ Հայաստան ժամանող եվրոպացիներն անցյալում անպայման հանդիպում էին քաղհասարակության ու լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ, անաչառ աղբյուրներից տեղեկատվություն էին հայթայթում եւ կասկածի տակ դնում իշխանությունների ներկայացրած վարդագույն, միակողմանի պատկերը: Ի՞նչ է պատահել՝ մոռացվ՞ել են աշխատելու տարրական սկզբունքները:

ԱՄՆ փոխնախագահ Ջեյմս Դեյվիդ Վենսը, ինչպես հայտնի է, փետրվարին կայցելի Հայաստան եւ Ադրբեջան: Ակնհայտ է, որ այցի գլխավոր նպատակը TRIPP-ի մեկնարկն է լինելու, հնարավոր է համատեղ ընկերություն հիմնելու մասին համաձայնագիր ստորագրվի, որում կամրագրվի, որ ամերիկյան կողմին բաժին կհասնի այդ ընկերության 74, Հայաստանին՝ 26 տոկոսը: TRIPP-ը, սակայն, միակ ուղղությունը չէ, որ լինելու է Վենսի ուշադրության կենտրոնում: Իշխանական կուլիսներում խոսում են, որ հնարավոր է նաեւ փաստաթուղթ ստորագրվի, համաձայն որի՝ Հայաստանն ԱՄՆ-ին է վերապահելու մոդուլային ատոմակայանի կառուցումը: Այս թեման արդեն մի քանի տարի է՝ շրջանառվում է իշխանության օրակարգում: Նման հայտ ներկայացրել է նաեւ Ռուսաստանը: Բնական է, որ որոշումը քաղաքական է լինելու. Արեւմուտքն ու ԱՄՆ-ն ՌԴ-ին տարածաշրջանից դուրս մղելու իրենց ծրագրի մաս են համարում Մեծամորի ատոմակայանի փակումը եւ մոդուլային ատոմակայանների կառուցումը:

20 էջանոց եզրակացություն

Խորհրդարանի հունվարյան նստաշրջանի մեկնարկին իշխանական մեծամասնությունը եւ փոքրամասնությունը կրկին քննարկեցին 44-օրյա պատերազմի հանգամանքները քննող հանձնաժողովի զեկույցի հարցը: Հայտնի է, որ ժամկետները խախտելու պատրվակով զեկույցը չի հրապարակվում, մինչդեռ իրականում քաղաքական որոշում է կայացվել՝ 20 թ. ցավոտ պատմությունը նորից ասպարեզ չհանել: Սակայն ուշագրավ է, որ անցած շաբաթվա նիստի ժամանակ ՔՊ-ական Վահագն Ալեքսանյանն առաջարկեց հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանին՝ զեկույցի հետ կապված լսումներ անցկացնել: Ըստ ամենայնի՝ իշխանությունը որոշել է լսումները նախընտրական նպատակներին ծառայեցնել՝ առիթը բաց չթողնելով պարտության մեղավոր հռչակել նախկիններին, որոնք «բանակը թալանել են»: Սակայն Անդրանիկ Քոչարյանին համոզել չի հաջողվում, նախկինում նա դեմ էր արտահայտվել լսումների գաղափարին՝ ասելով, որ եթե լսումներ լինեն, կնշանակի՝ զեկույց չկա, իսկ եթե կա, ապա այն պետք է ներկայացվի ԱԺ-ին: Չի բացառվում, որ լսումների փոխարեն հրապարակեն զեկույցի եզրակացությունը՝ մոտ 20 էջանոց, որտեղ ամփոփ գնահատականներ են տրվում տեղի ունեցածին:

ԱԽԹԱԼԱ

ԱՅՍ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵԿԵՂԵՑԻՆ ԸՆԿԱԼՈՒՄ Է ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԱԿՏԻՎ

Հայ առաքելական եկեղեցին անուրանալի դերակատարում է ունեցել հայ ժողովրդի կյանքում, դարեր շարունակ հայ մարդու հոգեւոր ինքնությունը կերտող հիմնասյուներից է եղել, ոչ միայն դիմակայել է ժամանակի փորձությանը, այլեւ դարերի ընթացքում ավելի է բարձրացել Եկեղեցու հեղինակությունը: Քրիստոնեական ուսմունքը քարոզելուց, տարածելուց ու պահպանելուց զատ, Եկեղեցին իր վրա է վերցրել նաեւ ազգային հարցերի լուծման, ազգապահպանման կարեւորագույն գործը: Այսօր հայրենի իշխանությունը պատերազմում է Եկեղեցու դեմ, եւ հոգեւորականները՝ Վեհափառ հայրապետի առաջնորդությամբ, խաչը ձեռքին մարտնչող զինվորներ են դարձել, որոնք պաշտպանում են Եկեղեցին վայրագ հարձակումից:

«Հրապարակի» զրուցակիցն է Ախթալայի Սուրբ Աստվածածին վանքի հոգեւոր հովիվ **Տեր Հեթում քահանա Թարվերդյանը**:

- Ինչի՞ց սկսվեց եկեղեցի-պետություն անջրպետը: Ձեր կարծիքով, այն, ինչ հիմա կատարվում է Հայաստանում, նախապես ծրագրվա՞ծ է եղել:

- Եկեղեցի-պետություն անջրպետը Հայաստանում սկսվեց ոչ թե վերջին տարիներին, այլ՝ անկախության առաջին փուլից, երբ նորաստեղծ պետությունը չկարողացավ ձեւակերպել իր հարաբերություններն ազգային եկեղեցու հետ՝ որպես ռազմավարական գործընկերություն: Պետությունն ընտրեց աշխարհիկության պարզեցված ընկալում՝ Եկեղեցին դուրս մղելով քաղաքական եւ հանրային ռազմավարական քննարկումներից: Այն, ինչ հիմա տեղի է ունենում, այս գործընթացի տրամաբանական շարունակությունն է: Այստեղ պետք չէ փնտրել գաղտնի սցենարներ, բայց նաեւ սխալ կլինի դա համարել ինքնաբուխ զարգացում: Սա այն մտածողության հետեւանքն է, ըստ որի՝ պետությունը պետք է ունենա մենաշնորհային դեր, իսկ պատմական ու ինքնիշխան ինստիտուտները պետք է կամ ենթարկվեն, կամ չեզոքացվեն: Այդ տրամաբանությունը վաղ թե ուշ պետք է հանգեցներ բախման:

- Մեր Եկեղեցին բոլոր ժամանակներում կյանքի ու մահվան կռիվ է տվել՝ երկիրն ու ազգը պահպանելու համար: Պատմությունը ցույց տվեց, որ անգամ խորհրդային տարիներին իշխանությունները ստիպված եղան փոխել իրենց մոտեցումը Եկեղեցու նկատմամբ եւ ընդունել նրա մեծ նշանակությունը հայ ժողովրդի կյանքում: Ի՞նչ սպասել այսօրվա իշխանություններից:

- Հայ առաքելական եկեղեցին պատմության ընթացքում գոյատեւել է պետության բացակայության պայմաններում եւ հաճախ՝ պետական ճնշումների ներքո: Խորհրդային իշխանությունը, երկարատեւ հակակրոնական քաղաքականությունից հետո, ստիպված եղավ փոխել իր մոտեցումը ոչ բարոյական զարթոնքի, այլ քաղաքական իրատեսության պատճառով: Նրանք հասկացան, որ Եկեղեցին հնարավոր չէ վերացնել, քանի որ այն հայ ժողովրդի ինքնության կառուցվածքային մասն է: Այսօրվա իշխանություններից նման գիտակցված շրջադարձ սպասելը դժվար է: Այստեղ գործ ունենք ոչ թե գաղափարական հակամարտության, այլ կառավարման մոդելի հետ, որտեղ Եկեղեցին դիտարկվում է որպես ազդեցության կենտրոն, որը չի վերահսկվում պետական ապարատից: Ուստի ավելի հավանական է շարունակական ճնշումը՝ վարչական, քարոզչական եւ ինստիտուցիոնալ մեթոդներով:

- Երբ որոշ սրբազաններ կանգնում են իշխանության կողքին՝ ընդդեմ իրենց Եկեղեցու՝ «բարենորոգման» քողի ներքո, ինչպե՞ս կբնութագրեք այս երեւույթը:

- Երբ որոշ սրբազաններ հանդես են գալիս իշխանության դիրքերից՝ ընդդեմ իրենց Եկեղեցու, եւ դա ներկայացվում է «բարենորոգման» գաղափարախոսությամբ, սա նոր երեւույթ չէ: Պատմության ընթացքում ցանկացած իշխանություն փորձել է Եկեղեցու ներսում գտնել իր համար հարմար գործընկերներ՝ լեգիտիմության պատրանք ստեղծելու համար: Սա իրական բարենորոգում չէ, որովհետեւ Եկեղեցու բարեփոխումները միշտ սկսվել են ներքին հոգեւոր եւ աստվածաբանական վերանայումից, ոչ թե քաղաքական հանձնարարություններից: Այստեղ մենք գործ ունենք Եկեղեցու ներսում իշխանական լեգիտիմության ներմուծման հետ, ինչը երկարաժամկետ հեռանկարում հանգեցնում է վստահության քայքայման:

- ՔՊ-ական պատգամավոր Թագուհի Ղազարյանն ասել է. «Հայաստանում գտնվող եկեղեցիները, որոնք առաքելական եկեղեցիներ են, պետք է պատկանեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, եւ ծայրահեղ բացառիկ դեպքերում պետք է հնարավորություն լինի դրանք վաճառել կամ օտարել, այն էլ՝ եթե հիմնավորվի դրա հանրային անհրաժեշտությունը, եւ կառավարությունը համաձայնություն տա»: Ի՞նչ կասեք պատգամավորի ասածի վերաբերյալ:

- Թագուհի Ղազարյանի հայտարարությունը վտանգավոր է ոչ միայն իր բովանդակությամբ, այլ նաեւ այն մտածողությամբ, որը դրա հիմքում է: «Հանրային անհրաժեշտություն» հասկացությունը երբ կիրառվում է սրբավայրերի նկատմամբ, վերածվում է քաղաքական գործիքի: Եկեղեցիները պարզապես պատմական շինություններ չեն, որոնք կարելի է օտարել կառավարչական նպատակահարմարությամբ: Եթե պետությունն իրեն իրավունք է վերապահում որոշելու, թե երբ կարելի է վաճառել կամ օտարել եկեղեցին, դա նշանակում է, որ եկեղեցին ընկալվում է որպես պետական ակտիվ: Սա քաղաքակրթական շրջադարձ է, որը կտրում է Եկեղեցին իր պատմական եւ հոգեւոր գործառույթից:

- Հայ առաքելական եկեղեցին հարկադրված է Եպիսկոպոսաց ժողովը կազմակերպել արտերկրում, որովհետեւ Հայաստանում սրբազանների վրա կարող են ուղղակի ու անթաքույց ճնշումներ գործադրել՝ սպառնալիքով, վարչական լծակներով եւ քարոզչական հարձակումներով: Փաշինյանի ձեւավորած Եկեղեցու բարենորոգման խորհուրդն էլ կոչ է արել չեղարկել հայոց եկեղեցու՝ Ավստրիայում փետրվարին գումարվելիք Եպիսկոպոսաց ժողովը: Ի՞նչ եք կարծում՝ կկայանա՞ այդ ժողովը:

- Եպիսկոպոսաց ժողովի՝ արտերկրում կազմակերպումն ինքնին վկայությունն է Հայաստանի ներսում ստեղծված մթնոլորտի մասին: Երբ Եկեղեցին չի կարող իր բարձրագույն ժողովները գումարել սեփական երկրում՝ առանց ճնշումների վտանգի, սա արդեն քաղաքական խնդիր է, ոչ թե կազմակերպչական: Իմ համոզմամբ՝ ժողովը կկայանա, որովհետեւ Եկեղեցին չի կարող հրաժարվել իր ինստիտուցիոնալ կյանքից: Չեղարկումը կնշանակեր ընդունել, որ քաղաքական միջավայրը կարող է թելադրել եկեղեցական օրակարգը: Եկեղեցու պատմությունը ցույց է տալիս, որ նման պայմաններում այն ընտրում է ոչ թե հարմարվողականությունը, այլ՝ ինքնիշխանության պահպանումը՝ անգամ ժամանակավոր արտաքսման գնով: Այս ամբողջ գործընթացը պետք է դիտարկել ոչ թե կրոնական զգացմունքների, այլ սառը քաղաքական տրամաբանության շրջանակում: Երբ պետությունը փորձում է վերահսկել կամ ենթարկեցնել ազգային ինստիտուտները, այն իրականում թուլացնում է սեփական հիմքերը: Իսկ պատմությունը ցույց է տալիս, որ այդպիսի քաղաքականությունը երբեք երկար կյանք չի ունենում:

Նելլի
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԿՐՔԵՐ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ. ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ «ՊՐՈՏԵԺԵԻՆ» ՔՊ-ԻՑ ՀԵՌԱՑՐԵԼ ԵՆ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության երեկվա նիստում իշխանականները Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ՔՊ կառույցի տարածքային խորհրդի նախագահի պաշտոնում հաստատել են համայնքի ղեկավար, Սամվել Բաբայանի նախկին թիմակից, ներկայում ՔՊ-ական դարձած Խաչատուր Անդրեասյանի թեկնածությունը: Միաժամանակ Անդրեասյանին նշանակել են ՔՊ-ի Մեղրիի նախընտրական շտաբի պետ՝ հունիսի ընտրությունների համար: Ինչպե՞ս է Սամվել Բաբայանի երբեմնի հավատարիմ զինվորը կրկին ՔՊ-ի վստահությանն արժանացել, քանի որ ամիսներ առաջ տեղի կուսակցականները նրան պատժել էին՝ չընտրելով, պարզեցինք կուսակցության մեր աղբյուրներից:

Դեռեւս ամիսներ առաջ գրել էինք, որ օգոստոսի 3-ին տեղի են ունեցել Մեղրիի ՔՊ տարածքային կառույցի ընտրությունները, որոնք անակնկալ արդյունքներ են գրանցել գործող համայնքապետ, դավանափոխ եղած Խաչատուր Անդրեասյանի համար: Սամվել Բաբայանի կուսակցության քվոտայով համայնքապետ դարձած Անդրեասյանը, որը ճամբարափոխ էր եղել՝ դարձել ՔՊական, իր թեկնածությունն էր առաջադրել ՔՊ տարածքային խորհրդի նախագահի պաշտոնում, որպեսզի շարունակի կարիերան համայնքապետի պաշտոնում, սակայն ՔՊ-ից լավ դաս էր ստացել: Նա, ճիշտ է՝ ընտրվել էր ՔՊ խորհրդի անդամ, սակայն նրան նախագահ չէին ընտրել՝ 7 ընտրողից 6-ը նրան կողմ չէր քվեարկել, փոխարենն անցել էր Աննա Հակոբյանի մտերիմը՝ Անդրանիկ Հովհաննիսյանը, որը Փաշինյանի կնոջ հայտարարած «Հաջողակից՝ սկսնակին» ծրագրի շրջանակներում դրամական աջակցություն է ստացել՝ բիզնես պրոյեկտ իրականացնելու համար, եւ Մեղրիում էլ նրան ընկալում են իբրեւ Աննա Հակոբյանի մերձավոր: Սակայն պարզվում է՝ այս ամիսներին շատ ջրեր են հոսել, վարչությունը մերժել է Անդրանիկ Հովհաննիսյանի նախագահությունը, ու հայտարարվել են նոր ընտրություններ: Պատմում են, որ մի կողմից՝ Անդրանիկ Հովհաննիսյանն է «հաբռգել»՝ փորձելով դառնալ տեղի կուսակցականների «ասիչը», մյուս կողմից՝ Խաչատուր Անդրեասյանը չի մարսել իր պարտությունը եւ համարել է, որ իր ապագայի, կարիերայի վրա խաչ է քաշվել. գալիք ընտրություններից հետո, եթե ՔՊ-ն մնաց իշխանության, իրեն գծերից գցելու են, ու տակից սկսել է դավեր նյութել Հովհաննիսյանի դեմ: Ի վերջո, ներկուսակցական կրքերն այնքան են լարվել, որ ծեծկռտուք է տեղի ունեցել, գլխավոր մեղավոր է հռչակվել Անդրանիկ Հովհաննիսյանը, ինչի պատճառով էլ ՔՊ-ն հեռացրել է նրան կուսակցության շարքերից ու նոր ընտրություններ է նշանակել, որի արդյունքում Բաբայանի երբեմնի թիմակցի բախտը կրկին բացվել է՝ նա է ընտրվել:

Երեկ մենք կցկտուր խոսակցություն ունեցանք Խաչատուր Անդրեասյանի հետ: Նա ասաց, որ միջոցառման է, չի կարող երկար զրուցել, սակայն չհերքեց, որ Անդրանիկ Հովհաննիսյանին հեռացրել են կուսակցությունից, քանի որ կռվել է թիմակիցների հետ: Խոստովանեց նաեւ, որ ինքն այժմ ոչ միայն ՔՊ Մեղրու տարածքային խորհրդի ղեկավարն է, այլեւ՝ ՔՊ-ի շտաբի պետը: Ի դեպ, ՔՊ հնաբնակները կարծում են, որ Անդրեասյանը չի ձգի ընտրություններին, նրա խոսքը համայնքում այնքան էլ չի անցնում:

Լուսինե
ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@
hraparak.am

ԹՈՒՐՔՆ ՈՒ ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆ ՈՐ ԼԱՎԸ ԼԻՆԵԻՆ, ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ ԵՐԱԶՈՂՆԵՐԻ ՊԱՊԵՐԸ ԿՄՆԱՅԻՆ ԱՅՆՏԵՂ ՈՒ ԱՅՆՏԵՂ ԷԼ ԿՍԱՏԿԵԻՆ

- Հայոց բանակի տոնին ընդառաջ, իշխանությունները որոշում կայացրին՝ հունվարի 27-ը հայտարարել սգո՝ բոլոր ժամանակների հերոսների հիշատակի օր: Ինչ կարծիք ունեք սուգն ու հաղթանակը, հաղթանակն ու պարտությունը միավորելու, մեկ գաղափար դարձնելու, բանակը երկրայինի եւ երկնայինի դասակարգելու հետ….

- Տոնից առաջ չի կարելի մարդկանց թեւաթափ անել եւ ասել՝ բանակն անիմաստ մի բան է, ավելին՝ եթե բանակ ունենաք, այսպիսի ավարտ է լինելու: Կարճ ասած, ուզում են ասել՝ քանի դեռ բանակ ունեք, զոհվելու եք: Այս երկուսն իրար շաղկապելով՝ ցանկանում են վերջնականապես թեւաթափ անել ժողովրդին: Բանակի տոնից առաջ զոհերի համար սգալ, որպեսզի տոն օր չլինի, մարդիկ ասեն՝ ինչի՞ համար ուրախանանք, որ այսքան զոհե՞ր ենք ունեցել. նպատակը սա է: Բանակի դիրքերն ամեն գնով թուլացնում են, այս ամենի տողատակերում կա նաեւ այն հանգամանքը, որ տղաները զոհվել են անտեղի, որ բանակի իմաստը զոհերն են: Խայտառակ մի իրավիճակ է հասունացել Հայաստանում, ինչի արդյունքում էլ հայ տղամարդու կերպարը պատվազուրկ է եղել: Էլ դրա տոնը ո՞րն է: Չի կարելի սուգ անել հարսանիքից առաջ, դա հեշտ բան չէ: Նույնն է, որ այսօր թաղման մեջ ես, վաղը՝ հարսանիքի, որքանո՞վ է դա խելքին մոտ:

- Ինչո՞ւ է հայ տղամարդը պատվազուրկ:

- Այս ամենը բերեց նրան, որ հայ տղամարդը զրկվեց իր պատվից: Ասացին՝ պարտվեցինք, կորցրինք, իսկ այդ ամենը բերեց նրան, որ տղամարդիկ կորցրին իրենց պատիվը. սա դեռ սկիզբն է: Այնպես են անելու, որ հայ կանայք արդեն տղամարդկանց չեն էլ հարգելու, այդ ժամանակ են սրանք մեծ հաղթանակը տոնելու: Իհարկե, կան հայ տղամարդիկ, որ ուզածդ ժամանակ իրենց կյանքը կտան հայրենիքի համար, բայց միեւնույն է՝ հայ տղամարդուն նսեմացրել են:

- Ճի՞շտ եմ հասկանում, որ պարտության մեղքը հայ տղամարդունն եք համարում:

- Ամեն դեպքում, հայ տղամարդը ստվերվում է: Տեսեք, թե մարդկանց խոսույթը որքան է հիմարացել: Մարդիկ թաքնվել են պատերազմի ժամանակ, ամեն բան արել, որ իրենց երեխաները կռիվ չգնան, ու հիմա այդ նույն պախկվածները կռիվ գնացածների վրա մատ են թափ տալիս, ասում են՝ դե կռվեիք, էլի, բա խի՞ նահանջեցիք, խի՞ փախաք: Տեսեք, թե ինչ երեւույթ է ձեւավորվում: Մարդիկ՝ բանակից փախած, մեզ խորհուրդներ են տալիս: Մի քանի օրում 5 հազար զոհ ու 10 հազար հաշմանդամ, կարծես քիչ էր…. նման մարդիկ չունեն տղամարդկային արժեքներ եւ այսպես մեր ազգի տղամարդկանց դարձնում են պատվից զուրկ:

- Այժմ Ադրբեջանից ցորեն, բենզին են բերում Հայաստան եւ միաժամանակ հարգում են զոհերի հիշատակը: Չկա՞ հակասություն:

- Հակասությունը ո՞րն է, եթե այս մարդիկ աննամուս են, նամուս, թասիբ չունեն: Տղամարդը երբ իր պատկերը կորցնում է, հետո կորցնում է պատիվն ու տեսակը: Այ, հենց սրա համար էի քիչ առաջ ասում՝ հայ տղամարդը պատվազուրկ է դարձել, ստամոքսով մտածող, դառել են եզ: Եզների համար կապ չունի՝ հայրենիքի համար ով զոհվեց, ով վտանգվեց: Ուզում են ապրե՞լ թուրքերի հետ, իսկ որտե՞ղ եք թողել ձեր տատերին եւ պապերին, ո՞ւմ թփերի տակ ու փախել՝ 15 թվականին: Որ էդքան լավ էր թուրքերի հետ ապրելը, ինչո՞ւ չէիք ապրում այդ ժամանակ: Խորհրդային Միության ժամանակ Ադրբեջանից ինչո՞ւ էին հայերը փախչում, եթե նրանք այդքան լավն էին, այն էլ՝ սովետի ժամանակ, երբ բոլորս իբրեւ մի ընտանիք էինք: Ճողոպրեցին՝ Բաքվից Հայաստան եկան, հիմա էլ ուզում են դրանց բերել այստեղ, որ մե՞զ քշեն այստեղից: Թուրքն ու ադրբեջանցիները որ լավը լինեին, նրանց մասին երազողների ապուպապերը կմնային այնտեղ ու այնտեղ էլ կսատկեին….

- Վերջին մեկ-երկու ամիսների ընթացքում Նիկոլ Փաշինյանը, Ալեն Սիմոնյանը, Վահագն Խաչատուրյանն այնքան շատ են շնորհակալություն հայտնել մարդասպան Ալիեւին, որ հաշիվը կորցրել ենք: Ըստ Ձեզ՝ ո՞րն է Ալիեւին շնորհակալություն ասելու նպատակը, առիթը:

- Արցախը հանձնեցին Ալիեւին եւ դեռ ոչ մեկի առաջ պատասխան չեն տվել: Իրավիճակ է ստեղծվելու, որ պատասխան են տալու Հայաստանի առաջ, իսկ եթե Հայաստանն էլ չլինի, նրանց համար շատ ավելի լավ՝ իրենք ոչ մեկի առաջ պատասխան չեն տա: Չկա պետություն՝ չկա պատասխան: Վաղն էլ կարող է նույն Ալիեւին խնդրեն, որ նա ղեկավարի մեզ, ի՞նչ կա որ, կարեւորը՝ բենզինն էժան լինի, ստրուկների լափը տեղը լինի, իրենք էլ ապահով լինեն, իրենց արարքների համար պատասխանատվության չենթարկվեն, փորները կուշտ քնեն:

*«Հրապարակի» զրուցակիցն «Արաբո» ջոկատի հրամանատար **Մանվել Եղիազարյանն** է:*

Էջը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԵԹԵ ՆՐԱՆՔ ՎԵՐԱՐՏԱԴՐՎԵՆ, ՄԵՆՔ ՇԱՏ ԱՐԱԳ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵՋ ԿՀԱՅՏՆՎԵՆՔ

«Հրապարակի» զրուցակիցը **Տեր Վրթանես քահանա Բաղայանն** է:

- Հունվարի 27-ը իշխանությունները հռչակեցին սգո օր՝ նվիրված բոլոր ժամանակների զոհված հերոսներին, սակայն անգամ զոհված զինծառայողների ծնողները չեն ընդունում դա՝ անարգանք են համարում, բոյկոտում են: Իսկ Հայ առաքելական եկեղեցին երեկ Մայր Աթոռում պատարագ էր անում՝ նվիրված զոհերին: Ստացվում է, որ Եկեղեցին այս ամենից հետո շարժվում է Փաշինյանի օրակարգով:

- Դրա լավագույն պատասխանը տվեց մեր Տեր Հովհաննեսը: Նա Դադիվանքում եւ Գանձասարում մեծ վաստակ ունեցող քահանա է, ինչպես նաեւ՝ Արցախյան ազատագրմանը մասնակցած մեկն է: Նա երեկ Եռաբլուրում շատ դիպուկ ասաց. «Ինձ համար ամեն օր զոհերի հիշատակի օր է»: Հունվարի 27-ը որպես հիշատակի օր մեր ժողովրդի կողմից չընդունվեց՝ ինչո՞ւ. որովհետեւ օրը, ամիսը ոչինչ չեն ասում: Նման օրերը պետք է ընտրվեն նշանավոր: Օրինակ՝ դա կարող էր լինել սեպտեմբերի 27-ը: Ի վերջո՝ մարդիկ այդ օրն ամեն տարի գնում են Եռաբլուր, հարգանքի տուրք են մատուցում: Իշխանությունների հերթական անմտածված քայլն էր սա: Այս իշխանությունը միշտ էլ ինչ-որ օրենքներ է ընդունում, հետո նոր միայն վերլուծում, թե տվյալ օրենքը որքանով էր նպատակահարմար ու կիրառելի: Որքան էլ որ մեզ համար խիստ անընդունելի է Նիկոլ Փաշինյանի հակաեկեղեցական արշավը, եթե պետությունը սահմանել է ազատ օր՝ ննջեցյալների հիշատակին նվիրված, ապա այդ օրը մենք եկեղեցիներում պետք է հոգեհանգստի կարգ իրականացնենք: Ես էլ Բյուրականի եկեղեցում հոգեհանգստյան կարգ եմ կատարել մեր հերոսների համար: Հերոսների հիշատակը հարգելը մեզ համար ավելի կարեւոր է, քան իշխանության հետ ունեցած հակասությունը: Մենք իշխանությունների հետ քաղաքական հարցերում ունենք բացահայտ հակադիր տեսակետ, բայց հիշատակի օրն այլ է: Մեր մեծ փափագն ու ցանկությունն այն է, որ Ադրբեջանի հետ հարաբերություններում մեր ռազմական բալանսը վերականգնվի, որպեսզի կարողանանք հաստատել արժանապատիվ խաղաղություն: Իշխանավորները ոստիկանական գվարդիա կազմելու համար որեւէ ռեսուրս չեն խնայում, սակայն բանակի համար ռազմական ծախսերը կրճատվում են, ծառայության 6 ամիսը կրճատվեց: Գուցե դա շատերի համար հաճելի է, հատկապես՝ ծնողների, սակայն դիրքերում սահման պահող զինվորի մեծ պակաս կա: Այս իշխանության օրոք 4 պատերազմ է տեղի ունեցել, չորսն էլ ավարտվել է հայկական կողմի պարտությամբ: Իշխանությունը հերթական սուտն է ասում, որ Ադրբեջանի հետ պատերազմ տեղի չի ունենալու: Եթե նրանք վերարտադրվեն, ապա մենք շատ արագ պատերազմի մեջ կհայտնվենք: Այսօրվա խաղաղությունը Ադրբեջանի կողմից ժամանակավոր հնարավորություն է, այս պարտված ու կապիտուլյանտ իշխանություններին, որպեսզի վերարտադրվեն:

- Բայց, փաստորեն, Եկեղեցին հարգում է իշխանության որոշումները, իսկ իշխանությունը չի հարգում Եկեղեցու կանոնակարգը, օրենքները, այն աստիճան, որ Վեհափառին «Կտրիճ» անունով են կոչում:

- Նրանք ոչ թե մեր օրենքներն ու որոշումները չեն հարգում, այլ չեն հարգում իրենք իրենց: Սահմանադրությունը խախտելով՝ նրանք առաջին հերթին անարգում են իրենց: Պետության ղեկավարը գործում է պետական օրենքներին հակառակ, դրանով նա առաջին հերթին իրեն է վնասում: Պետության ներսում ցանկանում է ստեղծել անարխիա, որ մենք էլ բոյկոտենք իրենց որոշումները: Փաշինյանը ոստիկանական գվարդիայով, պարգեւավճարներով իրեն ինքնավստահ է զգում եւ ամեն բան անում է, որպեսզի բախումներ լինեն: Նրանք ժամանակ առ ժամանակ ներխուժում են տարբեր եկեղեցիներ, իրենց շատ վատ են պահում: Մասյացոտնի առաջնորդարանը գրավել են ոստիկանները: Կարգալույծներն ունեն իշխանության աջակցությունը: Հակաեկեղեցական արշավին միացած Ստեփան Ասատրյանի եկեղեցու ճանապարհին իշխանությունը նորոգում է, բայց Բյուրականի եկեղեցու հիմնական ճանապարհը շարունակում է մնալ անմխիթար վիճակում, քանի որ ես Վեհափառին հավատարիմ եմ: Եվ ինչքան էլ որ իշխանավորները նման խտրական վերաբերմունքի են արժանացնում մեզ, մենք փորձում ենք մնալ կանոնական դաշտում, չտրվելով սադրանքներին եւ չհավասարվել Նիկոլ Փաշինյանին: Այն խոսքերը, հայհոյանքները, որ նա է կիրառում ԱԺ-ից, ես անգամ պատի տակ՝ ինքս ինձ հետ չեմ կարող կիրառել:

- Կճոյանին կարգալույծ անելու պահանջը մեծանում է՝ նա է տիրադավներին կառավարում: Ինչո՞ւ նրան էլ կարգալույծ չեն հռչակում: Տպավորություն է, որ Վեհափառն ինչ-որ բանի է սպասում:

- Վեհափառն իմաստուն կերպով է Եկեղեցու գործերով զբաղվում: Արման Սարոյանը, որը կարգալույծ եղավ, իրեն շատ վատ էր պահում, ոստիկանների հետ մեկտեղ քահանաների նկատմամբ ճնշում էր գործադրում, նույն բանը, իհարկե, նաեւ Կճոյանն է անում, սակայն՝ մի փոքր քողարկված. տարբերությունը դա է:

ՀԱՆՔ

ԱԽԹԱԼԱՅԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԱՎՈՐ ՀԱՆՔԱՓՈՐՆԵՐԻՆ ԿՓՈԽԱՐԻՆԵՆ ՀԵԴԻԿՆԵՐԸ

Հունվարի 16-ից՝ արդեն 10 օրից ավելի, Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի մոտ 50 հորատողներ գործադուլ են անում՝ պահանջելով աշխատավարձի ավելացում: Գործադուլավորներն Ալավերդի համայնքի Ախթալա եւ Շամլուղ բնակավայրերի բնակիչներ են, որոնք աշխատում են Շամլուղի հանքավայրում: Շամլուղի հանքերում արդյունահանված հանքաքարը, Ախթալայում հարստացվելուց հետո, մեծ բեռնատարներով առաքվում է Վրաստանի Բաթումի նավահանգիստ, այնտեղից էլ՝ արտերկիր:

Միջազգային շուկայում պղնձի գները բարձրացել են, հանքախորշերում իրենց կյանքը վտանգող, ծանր աշխատանք կատարող հանքափորներն էլ իրենց վարձատրության բարձրացում են պահանջում: «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ սեփականատերը Վահե Մաքսիմի Հակոբյանն է, որը նախկինում եղել է Սյունիքի մարզպետ, ԱԺ պատգամավոր, Ջրային կոմիտեի ղեկավար: Լեռնահարստացման կոմբինատի տնօրենը Վահե Հակոբյանի հորեղբորորդի Վիլեն Հակոբյանն է:

Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի արհմիության ղեկավար, Ախթալայի, Ալավերդու նախկին փոխհամայնքապետ **Սասուն Վարդումյանը** մեզ հայտնեց, որ գործադուլավոր հանքափորներն իրենց աշխատավարձի բարձրացման պահանջի հետ նաեւ դժգոհություն են ներկայացրել, որ, բացի հանքափորությունից, հանքերում պայթեցման, փականագործի, բանվորական այլ աշխատանքներ են կատարում, որի համար չեն վարձատրվում: Գործադուլի ընթացքում գործարանի տնօրինության հետ բանակցություններ են ընթանում, որի ընթացքում ձեռնարկության տնօրինությունը համաձայնել է, որ հավելյալ աշխատանքները՝ պայթեցումները եւ այլն, կիրականացնեն այլ բանվորներ: Ս. Վարդումյանն ասաց, որ ձեռնարկության տնօրինության հետ համաձայնության են եկել՝ անկախ այս գործադուլի արդյունքներից, գործարանի տնօրինության եւ արհմիության միջեւ համագործակցություն հաստատելու, առկա խնդիրները փուլերով լուծելու վերաբերյալ:

500 աշխատող ունեցող լեռնահարստացման կոմբինատի միայն 50 հանքափորներն են գործադուլ անում, մյուսները սպասում են գործադուլի հաջողությանը, որպեսզի գործադուլավոր հանքափորների աշխատավարձի բարձրացման դեպքում իրենց աշխատավարձն էլ որոշակի չափով բարձրանա: Ս. Վարդումյանը հայտնեց, որ հանքափորների գործադուլի հետեւանքով լեռնահարստացման կոմբինատը պարապուրդի չի մատնվել, աշխատում է պահեստներում կուտակված հանքաքարով, որը կբավարարի եւս մի քանի օր: Նրա վկայությամբ՝ գործադուլավոր հանքափորներին փոխարինելու, հանքերում աշխատելու համար մոտ 20 հնդիկ են բերել, որոնց տեղավորել են Փոքր Այրում գյուղի հյուրատանը: Սակայն հնդիկները դեռեւս հանքահորում աշխատանքի չեն անցել: Հունվարի 20-ին Ախթալայի լեռնահարստացման կոմբինատը Ֆեյսբուքի իր էջում աշխատանքի հրավեր է արել. ««Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն աշխատանքի է հրավիրում հորատանցողների՝ ստորգետնյա հանքում աշխատելու համար: Կայուն աշխատանք: Մրցունակ աշխատավարձ»:

Բայց եթե մրցունակ աշխատավարձ լիներ, էլ ինչո՞ւ էին հանքափորները գործադուլ անում: «Ախթալայի լեռնահարստման կոմբինատ» ՓԲԸ բաժնետոմսերի 22 տոկոսը պատկանում է ՀՀ կառավարությանը, սակայն կոմբինատում առաջացած կոնֆլիկտը լուծելու համար կառավարությունը միջոցներ չի ձեռնարկում: Լեռնահարստացման կոմբինատի արտաքին կապերի պատասխանատու Գագիկ Շահնազարյանը հայտնեց, որ հանքափորների աշխատավարձը գործարքային է՝ նրանք վարձատրվում են ըստ կատարած աշխատանքի ծավալների, հանքափորներ կան, որոնք ամսական շուրջ 1 միլիոն դրամ աշխատավարձ են ստանում: Նա հավելեց, որ գործադուլի միջոցով բարձրացված խնդիրները լուծվում են իրավական, բանակցային դաշտերում, եւ գործադուլներն աշխարհում սովորական երեւույթներ են, որոնք նաեւ սոցիալական հիմք ունեն:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

1882 արցախցի հեռացել է մարզից

Տավուշի մարզպետարանի տվյալներով՝ 2023 թվականի աշնանը Տավուշի մարզում բնակություն է հաստատել Արցախից բռնագաղթած 780 ընտանիք, 2 հազար 970 անձ: 2025թ. դեկտեմբերի 16-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել, թե ներկայում Տավուշի մարզում հաստատված՝ Արցախից բռնագաղթած քանի ընտանիք է ապրում, քանի անձ, նրանցից քանիսն է Տավուշի մարզի համայնքներում պետական աջակցության ծրագրով բնակարան ձեռք բերել: Տավուշի մարզպետի աշխատակազմից հայտնել են. «Ս.թ. դեկտեմբերի 16-ի դրությամբ ՀՀ Տավուշի մարզում բնակվում է ԼՂ-ից բռնի տեղահանված 1882 անձ, 550 ընտանիք, իսկ բնակարանային ապահովման պետական ծրագրի վերաբերյալ առաջարկում ենք դիմել պետական լիազոր մարմին (ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն)»: Այսինքն, անցած 2 տարում Տավուշի մարզից հեռացել է արցախցի 230 ընտանիք, 1088 անձ: Մարզպետը չի հայտնել մարզում բնակարան գնած արցախցիների թիվը, որովհետեւ չնչին թվեր են հանրապետությունով մեկ՝ չեն ասում, որ չասենք ձախողված, ի սկզբանե չաշխատող ծրագիր են իրականացրել: Սակայն մենք տեղեկացել ենք, որ մինչեւ հիմա Տավուշի մարզի Իջեւան եւ Նոյեմբերյան համայնքներում բնակարանային ապահովման պետական ծրագրով բնակարան է գնել ընդամենը 10 ընտանիք:

ՄԱՐՏՈՒՆՈՒ ԾՆՆԴԱՏՈՒՆԸ՝ ԲԿ ՏԱՆԻՔԻ ՏԱԿ

2025 թվականի նոյեմբերի 28-ին առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանն այցելել էր Մարտունու բժշկական կենտրոն, անգամ ԲԿ-ի տանիքն էր բարձրացել եւ Գեղարքունիքի մարզպետի հետ համատեղ «Մարտունի» ԲԿ-ի շինաշխատանքների հետ կապված աշխատանքային քննարկում ունեցել, որին մասնակցել էր նաեւ ԲԿ-ի տնօրեն **Անդրանիկ Հարությունյանը**, որը, չգիտես ինչու, մեր հարցերին կցկտուր պատասխաններ տվեց, երբ հետաքրքրվեցինք, թե նախարարի հետ ինչ քննարկում է եղել, կրկին խնդիրներ կա՞ն ԲԿ-ում շինարարության հետ կապված: «Ոչ մի խնդիր չունենք, ես չեմ հիշում, որ նման բան լինի, չգիտեմ, թե ինչ նկատի ունեք»: Նախարարն անգամ տանիք էր բարձրացել եւ տեսանյութ հրապարակել: «Տանիքի հիմնանորոգում չէ, էնտեղ նոր ծննդատուն է նախատեսվում, ծննդատան հետ կապված՝ որոշակի խնդիրներ, քննարկումներ են, որը որ շինարարներն ասում են, եւ նախագծով դա նախատեսված չէ: Կոնկրետ դրանով զբաղվում են համապատասխան մարմինները՝ ստուգելու, թե արդյո՞ք այդ փոփոխությունները պետք է արվեին, նախագծում կա՞ն, թե՞ չկան»:

Իսկ կարո՞ղ եք ավելի հստակ ասել՝ ինչ փոփոխությունների մասին է խոսքը, ԲԿ-ն կառուցող շինարարներն ինչ-որ հատված չե՞ն կառուցել, թե՞ այլ շինարարության մասին է խոսքը: «Փոփոխություններ պետք է արվեն, որն ինչի համար է, չեմ կարող ասել, դա ճշտման փուլում է: Շինարարների հետ կապված՝ կա քրեական գործ, թող ճշտեն, քրեական գործով կպարզաբանվի՝ եթե թերություններ են եղել, կշտկեն»: ԲԿ տնօրենից հետաքրքրվեցինք՝ եթե թերացել էին կամ գործը ավարտին չէին հասցրել, ինչպե՞ս է շենքի ավարտական ակտը ստորագրվել: «Ինչի համար որ ավարտական ակտը տրվել է, դրա համար ամեն ինչ նորմալ է»: Դուք ԲԿ-ի տնօրենն եք, այդ ժամանակ թերություններ չե՞ք նկատել: «Ես չգիտեմ, ես մասնագետ չեմ, չէի կարող տեսնել»: Իսկ ավարտական ակտը մարզպե՞տն է ստորագրել: «Ոչ միայն մարզպետը»: Փաստորեն, ԲԿ-ի վերջին հարկն ուզում եք ծննդատո՞ւն դարձնել: «Չգիտեմ, դա նախարարությունից պետք է որոշեն»: Դուք անձամբ եք մասնակցել այդ քննարկմանը, չգիտե՞ք, թե ինչ է նախարարությունն ուզում անել: «Ես ընդամենը կազմակերպում եմ հիվանդանոցի աշխատանքը, ես չեմ կարող ասել՝ կորպուս կավելանա, ծննդատունը որտեղ կսարքվի, դրա որոշողը ես չեմ: Եթե իմ կարծիքը հաշվի առնեն, եթե կարիքը լինի, ես կասեմ՝ ոնց անեն, մնացածը՝ մասնագիտական խումբ է աշխատում, իրենք էլ կորոշեն: Ես դրա ո՛չ իրավասությունն ունեմ, ո՛չ էլ՝ իրավունքը: Ես մասնագետ չեմ, որ ասեմ՝ որտեղ կամ ինչ կոնստրուկցիաներով պետք է սարքվի»:

«Առողջության իրավունք» ՀԿ նախագահ **Անուշ Պողոսյանը** մեզ հետ զրույցում ասաց, որ իրեն անհասկանալի է, թե ինչու են որոշել նոր ծննդատուն կառուցել, քանի որ, ըստ նրա, Մարտունու ծննդատունը մարզային առողջապահության ամենակայացած, ամենաճիշտ չափորոշիչներով աշխատող կլինիկան է, ունի հստակ ռազմավարություն եւ տարին տարվա վրա զարգանում է: «Վերջերս պետության կողմից ներդրում կատարվեց, եւ Մարտունու ծննդատանը բացվեց արհեստական բեղմնավորման հետ կապված բաժանմունք, եւ հիմա թե նորից որտեղ են փորձում այդ ծննդատունը տեղավորել, ես չեմ կարող ասել, բայց հստակ գիտեմ, որ Մարտունու ԲԿ-ի շենքային պայմանները թույլ չեն տալիս այդտեղ ավել բաժանմունք ծավալել, քանի որ արդեն իսկ ստեղծված ծառայությունների համար այդ հիվանդանոցը փոքր է: Բացի դա, կան շինարարական խնդիրներ, որի մասին բազմաթիվ անգամներ խոսվել է, ինչքանով ես տիրապետում եմ, կա նաեւ հարուցված քրեական գործ՝ չարաշահումների հետ կապված, եւ ինձ համար հասկանալի չէ՝ ինչու են Մարտունու ծննդատունը տեղափոխում: Ի՞նչ են անելու գործող ծննդատան շենքի հետ, ինչո՞ւ են այդ ռիսկը վերցնում՝ ծննդատունը մտցնում հիվանդանոցի մեջ եւ ծննդկաններին տարբեր վարակների թիրախ դարձնում»:

Հիշեցնենք, որ 2023 թվականին մեծ շուքով բացվեց Գեղարքունիքի մարզի Մարտունու բժշկական կենտրոնը: Կարճ ժամանակ անց պարզվեց, որ շինարարությունն անորակ է, վարչապետի մասնակցությամբ բացված ԲԿ-ն ենթակա չէ շահագործման: Դրա հետեւանքով նույնիսկ առողջապահության նախարարության պաշտոնյաներ ազատվեցին աշխատանքից՝ փոխնախարարը եւ ԾԻԳ-ի պետը: Իսկ ԲԿ տնօրեն Անդրանիկ Հարությունյանը տնօրենի պաշտոնը զբաղեցրեց օրենքի խախտումով:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Երկու ցնցող լուր եւ երկու դիտարկում

Երկու լուր լրահոսից ցնցեց ինձ: Մեկն այն մասին էր, որ ավտովթարից ծանր վնասվածքներով հիվանդանոց է տեղափոխվել բարձրաստիճան ոստիկան, ով «անուն է հանել» ընդդիմադիր պատգամավորների եւ հոգեւորականների նկատմամբ, մեղմ ասած, ոչ վայել պահվածքով: Իրեն այցի եկածներին նա ասել է. «Աստված ինձ պատժեց...»: Ոչ, հարգելիս, Աստված քեզ չի պատժել ... ընդամենը զգուշացրել է:

Զգուշացրել է, որ կա մի սահման, որից հետո մարդն այլեւս չի «ծառայում», այլ վերածվում է գործիքի: Զգուշացրել է, որ ուժը, եթե բիրտ է եւ անարդար, վերջում խփում է հենց ուժը կիրառողին: Պատիժը վերջակետ է, զգուշացումը՝ ստորակետ: Կյանքն էլ այդ երկուսի միջնամասում է:

Երկրորդ լուրը, որն արդեն մեկ ամիս է՝ քննարկում է ողջ երկիրը, միլիոնավոր դրամների պարգեւավճարն է: ՀՀ ֆինանսների նախարարը կառավարության հերթական անարդար որոշումը՝ պաշտոնյաների աշխատավարձերի բարձրացման ու պարգեւավճարների շռայլ բաշխման մասին, բնորոշել է որպես «համարձակ քայլ»: Ինչ խոսք՝ շա՛տ համարձակ քայլ է: Ո՞վ կհամարձակվեր օրը ցերեկով պետական բյուջեի դռները «ջարդել» ու ... համարձակ կողոպտել մեր ընդհանուրի գանձարանը: Համարձակություն է պետք, որ սեփական ձախողումների, աղքատության, պարտքերի, արտագաղթի ֆոնին մարդ կարողանա ինքն իրեն ու իր ապաշնորհ թիմին պարգեւատրել՝ առանց աչք թարթելու: Մենք հասկացանք, որ մեր երկրում կա մի անթերի, 100 տոկոսանոց աշխատող հոդված՝ պարգեւավճարների հոդվածը:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԿԱՐԾՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՂԾՈՒՄ Է, ՈՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՂԾԻ

Փաշինյանը փորձում է հանրային աջակցություն բեմականացնել, ընտրություններից առաջ ցույց տալ, թե ինքն ունի հասարակության լայն աջակցությունը, իր կոչով մարդիկ կարող են գալ ինչ-որ միջոցառումների: Հենց սկզբից էլ պարզ էր, որ նրա մոտ երաժշտական տաղանդի հայտնագործությունը եւ համերգ-պարահրապարակ կազմակերպելը նախընտրական քարոզչական միջոցառում է: Սպասելի էր նաեւ, որ նա դա կանի նման կոպիտ եւ անամոթ ձեւով, հայտարարելով. «Հեղափոխությանն ասում եմ այո՝ հունվարի 30-ի պարահրապարակի համար»: Ասածն այն է, որ ով եկավ պարահրապարակ, աջակցում է հեղափոխությանը, այդպիսով իր աջակիցն է:

Ընտրություններին դեռ չորս ամսից մի փոքր ավելի ժամանակ կա, եւ հանրային աջակցություն բեմականացնելու համար մենք Փաշինյանին մի քանի խորհուրդ տանք, որոնք նրան կօգնեն ավելի շատ մարդ հավաքել եւ ավելի մեծ հանրային աջակցության տպավորություն ստեղծել: Հաջորդիվ նա կարող է Հանրապետության հրապարակում կազմակերպել չալաղաջի, հետո՝ քյաբաբի, շաուրմայի փառատոներ, եւ եթե հիմա երաժշտական գործիքների ֆոնին է նկարվում, ապա այդ դեպքում մանղալի մոտ խորոված՝ շիշը պտտեցնելով կարող է ասել. «Հեղափոխությանն ասում եմ «այո», Հանրապետության հրապարակում կազմակերպված չալաղաջի փառատոնի համար», ովքեր սիրում են անվճար, բացարձակ ձրի չալաղաջ, կարող են գալ Հանրապետության հրապարակ եւ ստանալ իրենց բաժին չալաղաջը, հեղափոխությանն ասում եմ «այո», համեցեք Հանրապետության հրապարակ եւ ստացեք նախկին թալանչի իշխանությունների կողմից ձեզնից խլված եւ մեր կողմից ձեզ վերջապես վերադարձվող քյաբաբները՝ դրանով ձեր աջակցությունը հայտնելով հեղափոխությանը, այսինքն՝ ինձ:

Իսկ ընտրությունների հենց նախորդող օրը, այսպես կոչված՝ լռության օրը, կարող է կազմակերպել լրիվ ապաքաղաքական ակցիա՝ ստրիպտիզ-մերկապար Հանրապետության գլխավոր հրապարակում: Դրանով կկարողանա ոչ միայն հսկայական թվով «հեղափոխության առաջնորդների» հավաքել հրապարակում, այլեւ ի ցույց դնել սեփական իշխանության մերկությունը եւ սնանկությունը: Մերկապարի մասնակիցներին, որպես հումանիտար-բարոյական աջակցություն, կուղարկի Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին:

Հիշո՞ւմ եք Տիգրան Կարապետյանին՝ ԱԼՄ հեռուստաընկերության հիմնադիր սեփականատիրոջը, որը նաեւ Ժողովրդական կուսակցության նախագահն էր եւ այդ կուսակցության նախընտրական ցուցակը գլխավորելով՝ մասնակցեց խորհրդարանական ընտրություններին: Կարապետիչը նախընտրական շրջանում անում էր ճիշտ նույն բաները, ինչ հիմա անում է Փաշինյանը՝ փորձում էր հասարակության սիրտը շահել եւ հանրային աջակցություն բեմականացնել. աղքատ եւ անապահով մարդկանց ավտոբուսներով տանում էր Սեւան, այնտեղ մի կտոր հաց էր տալիս, նրանց հետ լուսանկարվում էր եւ փորձում էր այդկերպ համոզել, որ ինքն այդքան մեծ թվով աջակիցներ ունի: Բայց նրա հետ Սեւան գնացած, նրա հետ հաց կիսած եւ լուսանկարված մարդկանց մի չնչին մասը միայն իր ձայնը տվեց նրան, Կարապետյանը նույնիսկ չհաղթահարեց անցողիկ շեմը, այդպիսով նեղանալով եւ երախտամոռության մեջ մեղադրելով հասարակությանը:

Փաշինյանը, իհարկե, Տիգրան Կարապետյան չէ, ի տարբերություն Կարապետյանի, որն ընտրություններին մասնակցում էր որպես ընդդիմություն, Փաշինյանն ընտրությունների է գնում որպես իշխանություն: Փաշինյանը ոչ թե փորձում է հասարակությանը եւ ընտրողներին կաշառել կամ փոխել իր նկատմամբ ունեցած վերաբերմունքը՝ հասկանալով, որ դա անիմաստ եւ անիրականանալի է, նա ընդամենը ուզում է հող նախապատրաստել ընտրակեղծարարության համար: Նա չի կարող նախընտրական մեծ հանրահավաք կազմակերպել՝ մարդ չի գա, չի կարող նույնիսկ մարզային մեծ հանդիպումներ կազմակերպել՝ մարդիկ զզվում են իրենից, բայց ապաքաղաքական մասսան, որին ո՛չ ընտրություններն են հետաքրքիր, ո՛չ Փաշինյանը եւ ո՛չ էլ Հայաստանի ապագան, կարող է հավաքվել երգ ու պարի, խորոված-քյաբաբի, ստրիպտիզ-կանեփի փառատոներին: Նրանք ընտրության չեն գնա եւ չեն քվեարկի Փաշինյանի եւ ՔՊ-ի օգտին, բայց կապահովեն հանրային աջակցության տեսարաններ, տպավորություն կստեղծեն, որը Փաշինյանին հնարավորություն կտա ընտրությունները կեղծելուց հետո ասել՝ ասում եք, թե ես այդքան ձայն չէի կարող ստանալ, քանի որ երկիրը, մարդիկ զզվում են ինձնից, ատում են ինձ, բայց այդքան մարդ ո՞նց հավաքվեց իմ կանչով:

Մի մարդ, որը կարող է հանրային աջակցությունը կեղծել, արդյոք չի՞ կարող ընտրություն կեղծել, մանավանդ որ Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովն արդեն իր միանշանակ աջակցությունն է հայտնել պլանավորված ընտրակեղծարարությանը, իսկ ԿԸՀ նախագահն իր նախկին օգնականն է:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ Է ՎԿԱՅՈՒՄ ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ «ՄԱՍՆԱԿԻ ՆԱՀԱՆՋԸ»

«Հրապարակը» գրել էր, որ Հայ առաքելական եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը, ըստ որոշ ենթադրությունների, ամերիկյան հայ համայնքի եւ իր թեմի քահանաների ճնշման ներքո «դարձի է եկել»: Արքեպիսկոպոս Տերտերյանի վրա ահռելի ճնշումներ են գործադրել, կանգնեցրել երկընտրանքի առջեւ՝ կամ շարունակում է հավատարիմ մնալ Մայր Աթոռին, կամ նամակ են ուղարկում Էջմիածին՝ իր թեմական առաջնորդությունը դադարեցնելու պահանջով: Եվ միայն դրանից հետո է նա հայտարարել, որ փետրվարի 16-19-ին կմասնակցի Եպիսկոպոսաց ժողովին, որը Մայր Աթոռը հրավիրել է Ավստրիայում: Հոդվածում նշվում է նաեւ, որ Տերտերյանը թեեւ Եպիսկոպոսաց ժողովին, ասում են նաեւ՝ դրանից հետո կայանալիք Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովին մասնակցելու է, սակայն չի հայտարարել, որ լքում է Նիկոլ Փաշինյանի ստեղծած «Եկեղեցու բարենորոգման խորհուրդը»:

Հարցի զուտ հայաստանյան-ներքաղաքական բաղադրիչը մի կողմ թողնելով՝ անդրադառնանք մեկ այլ հարցի: Հոդվածից պարզ է դառնում մի պարզ ճշմարտություն. Առաքելական եկեղեցու՝ ամենակայացած վարչատարածքային ենթակառուցվածքային համակարգն ունեցող միավորներից մեկում թեմական հոգեւոր դասը եւ վարչականները, գուցե նաեւ՝ բարերարները, կարողացել են ճնշում գործադրել առաջնորդի վրա եւ հասնել նրան, որ առաջնորդական պաշտոնից զրկվելու սպառնալիքի ներքո ստիպեն առաջնորդին՝ մասնակցելու Եպիսկոպոսաց ժողովին: Ինչ է սա նշանակում: Սա նշանակում է թերեւս այն, որ եթե, օրինակ, Արարատյան հայրապետական, Կոտայքի, Մայացոտնի կամ Արմավիրի եւ, առհասարակ, Հայաստանի մյուս թեմերն էլ ունենային Արեւմտյան թեմի նման կայացած թեմական վարչական կառուցվածքային համակարգ, ապա դժվար թե Առաքել կամ Նավասարդ սրբազանները, մյուսները, ովքեր թեմական առաջնորդներ են, բայց միացել են Փաշինյանի ստեղծած հայտնի խորհրդին, երկար չմտածեին նման քայլ անելուց, շրջադարձային գործողությունների գնալուց առաջ:

Ավելի կոնկրետ եթե հարցի բոլոր շերտերը բացենք, պետք է եզրահանգենք, որ եթե թեմական առաջնորդները Հայաստանում ոչ թե նշանակվեին, այլ՝ ընտրվեին, նաեւ Հայաստանի եկեղեցական թեմերում կայացած թեմական խորհուրդներ, պատգամավորական ժողովներ եւ կայացած կանոնադրական ավանդույթներ ու պրակտիկա լիներ, ներառյալ՝ նաեւ թեմական առաջնորդներին պաշտոնանկ անելու ընթացակարգեր, ինչպիսին սփյուռքի համայնքներում է, ապա որեւէ առաջնորդ միշտ կզգար, որ ինքնագլուխ գործելու հնարավորություն չունի, եւ իր քայլերն առնվազն կհամաձայնեցներ թեմական մարմինների հետ, հակառակ դեպքում՝ միշտ իր գլխին կախված էր լինելու պաշտոնանկության վտանգը: Նաեւ՝ այդ համակարգի կայացումը, իր հերթին, թեմերի ինքնավարությունը կընդլայներ եւ շատ հարցերում, եթե խնդիրը զուտ հավատքային կամ կրոնական հարցերին չի վերաբերում, թույլ կտար թեմական մարմիններին՝ համաձայնել կամ չհամաձայնել կաթողիկոսի վարչական, տնտեսական կամ ֆինանսական այս կամ այն որոշման հետ, կամ ընդունել-չընդունել նմանաբնույթ որոշման կատարումը թեմի տարածքում:

Իր հերթին կաթողիկոսը եւս ավելի զգույշ եւ ճկուն կլիներ՝ ստիպված, թեմերի հետ իր հարաբերություններում՝ կադրայինից մինչեւ ֆինանսական ու առօրեական հարցեր, հաշվի նստելու: Սա եւս մեկ անգամ հուշում է այն մասին, որ Առաքելական եկեղեցում թեմական համակարգում ժողովական-ընտրական համակարգը պետք է կայանա հատկապես Հայաստանում եւ մերձավոր սփյուռքում՝ հետսովետական տարածքում, հետագա հնարավոր ցնցումներից խուսափելու համար:



Սերոբ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՎԹԱՐՎԱԾ ՄԵՔԵՆԱ, ՀԱՎԵԼՅԱԼ ԾԱԽՍ ԵՎ ԱՆՊԱՇՏՊԱՆ ՎԱՐՈՐԴ

ԱՊԵՄ

Անկեղծ ասած, դժվարանում էի այս նյութին համապատասխան վերնագիր ընտրել. «Ճանապարհային վթար. որտեղ է ավարտվում օրենքի ուժը», «Անմեղ վարորդի երկրորդ վթարը», «Վթարից հետո. մենակ օրենքի դիմաց», «Երբ դժբախտությանը գումարվում է անտարբերությունը»: Բոլորն էլ «արժանի» էին վերնագիր դառնալու:

Իջեւանում, մարզպետարանի շենքին հարակից քարե սալարկով փողոցով դանդաղ վեր էր բարձրանում «Օպել» մակնիշի ավտոմեքենան՝ երթեւեկության կանոնների պահպանմամբ: Ոչինչ չէր հուշում գալիք վտանգի մասին: Ամեն ինչ փոխվեց մի ակնթարթում. դիմացից անսպասելիորեն հայտնվեց «Վիլիս» մակնիշի մի ավտոմեքենա եւ բախվեց աջ գոտով ընթացող «Օպելին»: Վարորդը փորձեց վազանցել իր առջեւից ընթացող մեքենային, հայտնվեց հակադիր գոտում եւ ուշ նկատեց դիմացից եկող մեքենան: Թաց քարե սալարկի վրա արգելակելը չփրկեց իրավիճակը: Դեպքի վայր ժամանեցին ճանապարհային ոստիկանները: Պարզվեց, «Վիլիսի» վարորդը եղել է ալկոհոլի ազդեցության տակ: Նա եւ նրա մեքենան հեռացվեցին: Ապահովագրական ընկերության ներկայացուցիչը եւս արձանագրեց դեպքը եւ, ըստ երեւույթին, կատարեց իր գործառույթները: Սակայն այդ պահից էլ սկսվեց պատմության ցավոտ եւ, ցավոք, օրինաչափ մասը:

Վթարի ենթարկված մեքենան չէր կարող շահագործվել: Հարցը պարզ էր ու կենսական՝ ինչպես տեղափոխել այն: Ապահովագրական ընկերության աշխատակցի պատասխանը կարճ էր. ինքը կարող է միայն տեղափոխող մեքենայի վարորդի հեռախոսահամար տալ: Այլ աջակցություն նախատեսված չէ: Տվեցին հեռախոսահամար: Պահանջվող գումարը Իջեւանից Վանաձոր տեղափոխելու համար ոչ միայն բարձր էր, այլեւ փաստաթղթերով չհաստատվող: Իսկ առանց համապատասխան փաստաթղթի, ապահովագրական որեւէ ընկերություն չի փոխհատուցում տեղափոխման ծախսերը: Վթարի ենթարկված վարորդը կանգնած էր փակուղու առաջ. կամ ընդունել պայմանները եւ կրել չհիմնավորված եւս մեկ ծախս, կամ թողնել մեքենան ճանապարհի եզրին ու սպասել անորոշության:

Այս իրավիճակում անհնար է չնկատել համակարգային բացը: Ապահովագրական ընկերությունները պարտավորվում են փոխհատուցել վնասը, սակայն չեն ապահովում վթարված մեքենայի օրինական տեղափոխումը: Պետական վերահսկողությունն ավարտվում է վթարի արձանագրումով, իսկ դրանից հետո քաղաքացին մնում է միայնակ՝ իր խնդիրների հետ: Խնդիրը ոչ միայն ֆինանսական է կամ բարձր սակագների ու անհատ վարորդների անօրինական վարքագծի մեջ: Խնդիրը համակարգային է եւ վերաբերում է այն պետական եւ վերահսկող մարմիններին, որոնք կոչված են կարգավորելու ճանապարհային երթեւեկության, ապահովագրության եւ արտակարգ իրավիճակներում օգնության տրամադրման մեխանիզմները: Այն վերաբերում է մարդու արժանապատվությանը, անվտանգության զգացողությանը, պետության նկատմամբ վստահությանը: Երբ վթարի ենթարկված անմեղ վարորդը ստիպված է իր դժբախտության պահին «բանակցել» պատահական ծառայությունների հետ, բացել գրպանը՝ առանց որեւէ երաշխիքի, որ իր կատարած ծախսը փոխհատուցվելու է, իսկ նրա ամեն դրամը հաշված է:

Անկախ նրանից՝ մարդն Իջեւանից է, Վանաձորից, Զանգեզուրից, թե Տավուշից, իրավիճակը նույնն է: Վթարը դառնում է ոչ թե մեկ պահի փորձանք, այլ՝ երկարատեւ փորձություն, որտեղ օրենքն ու պատասխանատու կառույցները չեն գործում: Եթե ապահովագրական ընկերությունները պարտավոր են փոխհատուցել վնասը, ապա ինչո՞ւ նույնքան հստակ պարտավորություն չունեն՝ ապահովելու նաեւ վթարված մեքենայի օրինական, փաստաթղթավորված եւ հասանելի տեղափոխումը: Ինչո՞ւ է դա թողնված շուկայական քմահաճույքին ու պատահական վարորդների «բարեհաճությանը»:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐԸ ԹԱՔՑՐԵԼ Է, ՈՐ ՏՈՒԺՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԻ

2023 թ. հուլիսի 31-ից Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ընթանում է Սուրեն Մանուկյանի, Արմեն Քամալյանի, Թաթուլ Պողոսյանի, Մուրադ Մուրադյանի դատավարությունը: Մանուկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Ա. Քամալյանի, Մ. Մուրադյանի, Թ. Պողոսյանի եւ մի խումբ այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ 2022 թ. հուլիսի 27-ին Իջեւան համայնքի Աչաջուր գյուղում առեւանգել է Գրիշա Քոքոբելյանին, տեղափոխել Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ծաթեր բնակավայր, մինչեւ 2022թ. օգոստոսի 2-ը պահել նշված վայրում վարձակալած տանը եւ նույն օրն ազատ արձակել: Ըստ մեղադրանքի՝ 2022թ. հուլիսի 29-ից Գրիշա Քոքոբելյանի որդուց՝ Խաչատուր Քոքոբելյանից, հորն ազատ արձակելու դիմաց, շորթմամբ պահանջել են առանձնապես խոշոր չափերի՝ 3 միլիոն ԱՄՆ դոլար, որից փաստացի ստացել են 40 հազար դոլար՝ կրիպտոարժույթի տեսքով: Ս. Մանուկյանին, Ա. Քամալյանին, Թ. Պողոսյանին, Մ. Մուրադյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 191 հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (Մի խումբ անձանց կողմից մարդուն առեւանգելը) եւ 258 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (Շորթումը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով):

Մանուկյանը եւ մյուս մեղադրյալները մեղադրանքը չեն ընդունում՝ համարելով այն շինծու, հնարովի: Սուրեն Մանուկյանն Իջեւանի նախկին փոխքաղաքապետ, Իջեւանի անտառտնտեսության նախկին տնօրեն, ԱԺ նախկին պատգամավոր, ՀՅԴ Գերագույն մարմնի նախկին անդամ է: Նա քրեական գործով շուրջ 3.5 տարի գտնվել է կալանքի տակ, այժմ տնային կալանքի տակ է, սահմանափակված է նրա շփումն ընտանիքի անդամ չհանդիսացող անձանց հետ: Մանուկյանի պաշտպան Սերգեյ Ոսկանյանի հետ զրուցել ենք դատավարության մասին: Պաշտպանն ասում է, որ շորթման հատկանիշներով քրեական գործ հարուցելու համար իրավապահներին պատշաճ հաղորդում չի տրվել: 2025թ. ամռանը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում տեղի ունեցած նիստերից մեկի ժամանակ մեղադրյալ Արմեն Քամալյանը վիրավորական արտահայտություններ է արել դատավոր Սասուն Մխիթարյանի հասցեին, որից հետո՝ 2025թ. օգոստոսի 1-ին, դատավոր Մխիթարյանը դիմել է Քննչական կոմիտե, դատավորին տրվել է տուժողի կարգավիճակ, նա հարցաքննվել է, սակայն այդ փաստը դատավորը թաքցրել է դատավարության մասնակիցներից: Դեկտեմբերի 17-ի նիստի ընթացքում, երբ Ս. Մանուկյանին եւ նրա պաշտպաններին հայտնի է դարձել այդ փաստը, նրանք դիմել են դատավոր Մխիթարյանին, թե ինչու նա այդ հիմնավոր պատճառով, գործով մեղադրյալի հետ շահերի հակադրության պատճառով ինքնաբացարկ չի հայտնել, եւ նշված հիմքով դատավոր Մխիթարյանին ինքնաբացարկ են հայտնել: Դրանից հետո դատավոր Ս. Մխիթարյանը դիմել է Քննչական կոմիտե եւ հրաժարվել տուժողի կարգավիճակից, ապա մերժել է իրեն ներկայացված բացարկի միջնորդությունը: Ս. Մանուկյանը եւ նրա պաշտպանները հունվարի 21-ին կայացած նիստում նոր հիմքով են դատավորին բացարկի միջնորդություն ներկայացրել: Սուրեն Մանուկյանը համոզված է, որ դատավոր Մխիթարյանը չի ցանկանում ինքնաբացարկ տալ, որպեսզի այդ գործով մեղադրական դատավճիռ արձակի: Մանուկյանը եւ նրա պաշտպանները նախկինում, դատավարության ընթացքում 4 անգամ տարբեր հիմքերով բացարկի միջնորդություններ են ներկայացրել դատավոր Սասուն Մխիթարյանին, սակայն նա բոլոր միջնորդությունները մերժել է: Մանուկյանը եւ նրա պաշտպանները կարծում են, որ դատավոր Մխիթարյանը չի կարող այդ գործով անկողմնակալ ու անաչառ լինել: Դատական հաջորդ նիստը փետրվարի 4-ին է:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉՈՒ է ԱՄՆ փոխնախագահն այցելում Հայաստան

Քաղաքագետ Ալեքսեյ Անպիլոգովը կարծում է, որ Ռուսաստանի եւ Միացյալ Նահանգների նախագահների միջեւ Ալյասկայի Անքորիջ քաղաքում կայացած հանդիպման ժամանակ տեղի է ունեցել ազդեցությունների ոլորտների բաշխում: «Դատելով մի շարք անուղղակի տվյալներից, ինչպես նաեւ՝ քաղաքական հայտարարություններից, որոնք արվել են ռուսական եւ ամերիկյան կողմերից, Անքորիջում համաձայնություն է ձեռք բերվել ԱՄՆ եւ Ռուսաստանի միջեւ ազդեցության ոլորտների բաժանման վերաբերյալ»,- Alpha News-ին ասել է քաղաքագետը: Նա նկատել է, որ ԱՄՆ-ի համար շատ կարեւոր է իր ճանապարհային նախագծի իրականացումը, քանի որ այն լինելու է «Մետաքսի ճանապարհի» եւ «Մեկ գոտի՝ մեկ ճանապարհի» այլընտրանքը: «Ամերիկյան կողմը դրա համատեքստում ցանկանում է գոնե ինչ-որ ազդեցություն ունենալ Հարավային Կովկասում: Այս ռեգիոնն ամերիկացիների համար վերջին 20 տարում եղել է շատ խնդրահարույց: Այս հարցում ամերիկացիների մոտ հակասություններ կան, իհարկե, սակայն պետք է հասկանալ նաեւ Ստամբուլի նույնանման շահերը, որոնք եւս Հարավային Կովկասը դիտարկում են որպես այլընտրանքային ուղի՝ թյուրքական աշխարհ՝ Միջին Ասիա ներթափանցելու համար: Իհարկե, ամերիկյան պետական աստիճանակարգում երկրորդ դեմքի այցելությունն աչքի է ընկնում նրանով, որ ցայժմ ռեգիոնի հետ կապված բոլոր կապերը մշակվել են դեմոկրատական վարչակազմերի կողմից, եւ հայկական, եւ ադրբեջանական վերնախավերի հետ ամերիկյան հանրապետականների հետ բարձր մակարդակի շփումները շատ քիչ են եղել: Ուստիեւ կարծում եմ, որ Վենսն այժմ կամուրջներ է կառուցելու, փորձելու է գտնել ազդեցության գործակալներ, կառուցելու է ԱՄՆ-ում հարավկովկասյան հաճախորդների իր ցանցը, որոնք աշխատելու են այդ ճանապարհի կառուցման համար»,- ասել է ռուս փորձագետը:

Նա հավելել է, որ այս իրավիճակում շատ կարեւոր է պահպանել ինքնիշխանությունը եւ «պոկել առավելագույնը»՝ գոյապահպանման համար, ինչը կարող է բերել Իրանի մեկուսացման եւ հակասություններ ստեղծել Թեհրանի հետ հարաբերություններում, քանի որ այս նախագծում Իրանը չի մասնակցում, եւ ավելին՝ Իրանը ներկայացնում է Չինաստանի շահերը: Չինաստանը, իհարկե, գոհ չէ այլընտրանքային ճանապարհներ ստեղծելու այս քաղաքականությունից, քանի որ դրանք մրցակցելու են իր ճանապարհների հետ: Հայաստանը, ըստ այդմ, հայտնվում է շատ բարդ ընտրության առաջ, եւ ժամանակը ցույց կտա, թե այս ամենից ինչ կստացվի:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏՈՒՐԻԶՄ

«ՀԱՅԷՔՍՏՐԻՄԸ»՝ ԼՈՌԻՈՒՄ

Վերջին տասնամյակներին աշխարհում տուրիզմի ամենաարագ զարգացող ուղղություններից մեկը դարձել է էքստրեմալ (ծայրահեղ վտանգավոր) տուրիզմը: Ջրային, օդային, լեռնային, ցամաքային տուրիզմի տարբեր ճյուղերի մեջ աստիճանաբար առաջատար դիրքեր է գրավել ակտիվ, վտանգով հագեցած, ադրենալին պահանջող նորաձեւ ուղղությունը, որի սիրահարները վստահ են՝ այն զգացողությունները, որ ստանում են ժայռի վրա կախված, գետի փրփուրների մեջ մաքառելիս կամ օդում ազատ անկման պահին, չեն համեմատվում որեւէ այլ հույզի հետ: Այդ զգացողությունները, ի դեպ, հնարավոր է ունենալ նաեւ Լոռիում:

Ադրենալինի այնպիսի քանակ է արտադրվում մարդու օրգանիզմում այդ պահերին, որ ասում են՝ այն կհերիքի մինչեւ կյանքիդ վերջը: Տարբեր միջազգային աղբյուրներ, այդ թվում՝ աշխարհահռչակ հետազոտական կենտրոններ, նշում են, որ Հայաստանն էքստրեմալ տուրիզմի զարգացման բացառիկ հնարավորություններ ունի: Լեռներ, կիրճեր, արագահոս գետեր, անտառներ, քարանձավներ, բարձրադիր տարածքներ. ամեն ինչ կա, որպեսզի երկիրը դառնա էքստրեմալի տարածաշրջանային կենտրոն: Սակայն մեր իշխանավորներն այդքան ճկուն ու ջանադիր չեն, որ օգտվեն այդ հնարավորություններից, բայց էքստրեմալ տուրիզմը սկսում է կամաց զարգանալ, եւ դրանում կարելի է համոզվել՝ շրջելով, օրինակ, Լոռիով:

ԼՈՌԻՆ՝ ՈՐՊԵՍ ԽՏԱՑՎԱԾ ՊԱՏԿԵՐ

Լոռին կարելի է անվանել էքստրեմալ տուրիզմի բոլոր տեսակների բնական ու դասական հարթակ: Այստեղ կան լեռնագնացության ու ժայռամագլցման համար հարմար ժայռեր, արագահոս գետեր՝ ռաֆթինգի ու քայաքինգի համար, անտառներ ու կիրճեր՝ արշավների համար, քարանձավներ՝ սպելեոտուրիզմի համար, բարձրադիր տարածքներ՝ պարապլաներիզմի ու բեյս-ջամփինգի համար: Մի մարզի սահմաններում կարելի է համադրել աշխարհի գրեթե բոլոր հայտնի էքստրեմալ տուրիզմի ձեւերը: Բայց Լոռին առանձնանում է ոչ միայն դրանով: Այստեղ էքստրիմը վաղուց դուրս է եկել սպորտային ու զբոսաշրջային սահմանումներից եւ դարձել առօրյա կյանքի բաղկացուցիչ: Այն այնքան խորն է ներթափանցել կենցաղ, քաղաքային միջավայր, հասարակական հարաբերություններ, որ մարդը հաճախ անգամ չի գիտակցում, որ ինքն ապրում է մշտական էքստրիմի մեջ:

ԷՔՍՏՐԻՄ՝ ԱՌԱՆՑ ԱՇԽԱՐՀ ՇՐՋԵԼՈՒ

Հայ-էքստրիմը վայելելու համար բոլորովին էլ պարտադիր չէ բարձրանալ Կիլիմանջարո, Էլբրուս կամ անցնել մեռած կանյոններով, օձառատ ավազուտներով ու անմարդաբնակ վայրերով: Դրա համար ընդամենը պետք է այցելել էքստրիմի երկիր Հայաստան, տեղավորվել ցանկացած քաղաքի կամ գյուղի հյուրանոցում, հանգրվանում եւ սպասել: Էքստրիմը քեզ երկար սպասեցնել չի տա:

ԷՔՍՏՐԻՄ՝ ԱՌԱՆՑ ՊԱՏՎԵՐԻ

Լոռի ես գալիս որպես զբոսաշրջիկ: Տեղավորվում ես հյուրանոցում, հյուրատանը կամ պարզապես որեւէ հանգրվանում: Չես հասցնում պայուսակդ բացել, երբ առաջին էքստրիմը քեզ գտնում է ինքն իրեն: Ցնցուղը կարող է չաշխատել կամ աշխատել անկանխատեսելի տրամաբանությամբ: Տաք ջուրը կարող է բացակայել: Իսկ եթե բախտդ բերի, ու ջուրը հանկարծ հայտնվի, այն կարող է գալ այնպիսի ճնշմամբ, որ ցնցուղի գլխիկը որոշի ազատ անկման մեջ՝ ուղիղ գլխիդ ընկնել: Էլ ի՞նչ իմաստ ունի էքստրիմ փնտրել՝ սառնորակ լեռնային գետերում, երբ նույն զգացողությունը ստանում ես փակ տարածքում՝ առանց մեծ ջանքերի:

ՔԱՂԱՔԸ՝ ՈՐՊԵՍ ՓՈՐՁԱԴԱՇՏ

Դուրս ես գալիս քաղաք: Լոռու քաղաքները, ինչպես Հայաստանի գրեթե բոլոր քաղաքները, ունեն յուրահատուկ ճարտարապետական դիմագիծ: Շենքերը, խանութ-տնակները, ժամանակավոր կառույցները, կիսակառույցները գոյակցում են առանց հստակ տրամաբանության: Մայթերը հաճախ ավելի շատ հիշեցնում են փորձադաշտ, քան քայլելու տարածք: Անհարթություններ, ջրափոսեր, ձմռանը՝ սառցաշերտեր, որոնք չեն մաքրվում, որովհետեւ ենթադրվում է, որ մարդը պետք է ինքնուրույն հաղթահարի արգելքները: Քայլելը դառնում է արկած: Ամեն քայլը պետք է հաշվարկ անես՝ ինչպես էքստրեմալ լեռնագնացության կամ ռաֆթինգի ժամանակ: Սա ոչ թե զբոսանք է, այլ՝ մասնակցություն քաղաքային էքստրեմալ «մրցույթին»:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԷՔՍՏՐԻՄ

Փողոցներն ու մայթերը հաճախ գրավված են անտարբեր ու պարապ երիտասարդներով: Նրանք ծխում են, գարեջուր են խմում, արեւաածաղիկ չրթում: Փորձիր դիտողություն անել՝ կրակը կընկնես: Քաղաքային միջավայրն արագ կվերածվի ոչ միայն ֆիզիկական, այլ նաեւ հոգեբանական էքստրիմի միջավայրի, եւ հայտնի չէ՝ կկարողանամ այդ էքստրիմից անփորձանք դուրս գալ, թե՝ ոչ:

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԷՔՍՏՐԻՄ

Զուգարանների հարցը, որպես կանոն, մնում է տուրիստական ծրագրերից դուրս: Մեզ մոտ զբոսաշրջությունն իբր զարգացնում են, բայց մոռանում են ամենապարզ ու ամենակարեւոր ատրիբուտի մասին: Պատկերացրեք՝ քաղաքին անծանոթ զբոսաշրջիկը հանկարծ բնական կարիքները հոգալու պահանջ ունի: Մոտակա զուգարանը կարող է լինել 10-12 կանգառ հեռու կամ՝ ընդհանրապես չլինել: Տուրիզմի զարգացած երկրներում զուգարաններ կան անգամ սարերում ու լեռներում: Մեզ մոտ չկան նույնիսկ քաղաքներում: Սա արդեն ֆիզիոլոգիական էքստրիմ է:

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԷՔՍՏՐԻՄ

Մեր փողոցներում ու հանգստյան գոտիներում վխտում են թափառող շների ոհմակներ: Դրանք Վենետիկի կենտրոնական հրապարակի հեզ աղավնիները չեն, որ միայն ծրտելով բավարարվեն կամ ոտքերիդ տակ դեսուդեն քայլեն: Մեր շները նաեւ հարձակվել գիտեն, իսկ զբոսաշրջիկը միշտ պատրաստ չէ այդ էքստրիմին:

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎՏԱՆԳՎԱԾ ՈՒ ՎՏԱՆԳԱՎՈՐ

Լոռու բնությունը գեղեցիկ է, բայց՝ խոցելի: Առաջին տեղատարափ անձրեւը բավական է, որ գետը դուրս գա հունից, փոխի ուղղությունը եւ հիշեցնի, որ ինքը նույնպես էքստրիմի մասնակից է: Գետերի հունները մաքրելու փորձերը հաճախ անիմաստ են, որովհետեւ ավտոմեքենաների կմախքներ, հին հեռուստացույցներ, շշեր ու կենցաղային աղբ, ինչ ասես կա այդ հուներում, որոնք խցանել են գետի հոսքը: Մի տեղատարափ, եւ հեղեղը փողոցներով է հոսում:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԷՔՍՏՐԻՄ

Եթե այս ամբողջ շղթայում վնասվես եւ բժշկական օգնության կարիք ունենաս, ապա էքստրիմը տեղափոխվում է հիվանդանոց: Այստեղ ամեն ինչ կախված է քո հնարավորություններից: Որքան «ունես», այնքան կբուժվես: Վերջացավ՝ դուրս կգրվես: Եվ սա սատիրա չէ, սա կենցաղային փորձ է:

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԷՔՍՏՐԻՄ

Եվ վերջում՝ Լոռվա վերելակները: Շատ շենքերում դրանք սովետական թարմության են եւ 30-35 տարի չեն նորոգվել, չեն փոխվել: Ամեն մի հարկ բարձրանալն իրականում էքստրեմալ խաղ է ճակատագրի հետ՝ տեղ կհասնի՞, թե՞ կեսճանապարհին կկանգնի: Այս էքստրիմը սկսվում է հենց շքամուտքից:

ԼՈՌԻՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԵԼԻ

Այս ամենը, իհարկե, միայն Լոռվա մարզի մասին չէ: Լոռին ընդամենը օրինակ է: Նույն պատկերը կտեսնեք նաեւ Հայաստանի ցանկացած մարզում: Տարբեր են լանդշաֆտները, նույնն է վերաբերմունքը, իրավիճակը: Մենք սիրում ենք ասել՝ տուրիզմ ունենք: Բայց տուրիզմը ենթադրում է անվտանգություն, համակարգ, պատասխանատվություն, պատշաճ սպասարկում, հարմարավետություն, կանխատեսելիություն: Մեզ մոտ ձեւավորվել է բոլորովին այլ բան՝ հայ-էքստրիմ: Էքստրիմ՝ առանց ծրագրի, առանց ներդրումների, առանց ընտրության: Էքստրիմ, որին չես գնում, այլ որը գալիս է քեզ ընդառաջ, եթե անգամ դու էքստրիմի սիրահար չես:

ԳԼԽԱՎՈՐԸ՝ ԱՆ-ՎԸ-ՃԱ՛Ր

Մինչ աշխարհը միլիոններ է ծախսում՝ ադրենալին «արտադրելու» համար, մեզ մոտ այն արտադրվում է ինքնաբուխ՝ առանց ջանքերի ու մեծ գումարների: Դրա ստեղծմանը մենք ազգովի ենք մասնակցում: Դա առանց տոմսի, առանց ապահովագրության, առանց վերադարձի իրավունքի է: Սա պարծենալու բան չէ՝ սա ընդամենը արձանագրում է: Մենք՝ հայերս, փաստորեն, գիտակցաբար ենք ընտրում հայ-էքստրիմը եւ պատրաստ ենք այս փորձով կիսվել օտարերկրացիների, զբոսաշրջիկների հետ, որոնց Հայաստանում անմոռանալի հանգիստ եւ ադրենալինի չլսված չափաբաժին է սպասվում:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ՄՈՒԼՏ ՆԱԽԱԳԻԾ՝ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍՅՈՒԺԵՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

DreamWorks Animation-ը միշտ հետաքրքիր եւ պրովոկացիոն մուլտ նախագծեր է իրականացրել: Առանց այս ընկերության, մենք չէինք ունենա «Շրեկն» ու «Մադագասկարը» կամ էլ «Կունգ Ֆու Պանդան»: Սակայն դեռ իր գործունեության արշալույսին այս ստուդիան ստեղծեց երաժշտական մուլտ նախագիծ՝ «Եգիպտոսի արքայազնը», որի հիմքում Մովսես մարգարեի մասին սուրբգրային պատումներն էին ընկած:

Սյուժեն շատ պարզ է: Իր նորածին որդուն փրկելու համար, ստրկուհի Յոհավեդան նրան դնում է զամբյուղի մեջ ու գցում գետը: Նորածին մանուկին գտնում է փարավոնի կինը կամ քույրը եւ որոշում որդեգրել մանկանն ու նրան անվանել Մովսես՝ մեծացնելով որպես իրենը: Մանուկը մեծանում է պալատում եւ չարաճճիություններ անում իր խորթ եղբոր՝ ապագա փարավոն Ռամզեսի հետ: Սակայն հետո նա իմանում է իր ծագման մութ պատմությունը եւ կոչումը՝ ազատել հրեաներին ստրկությունից: Դեռ մուլտֆիլմի սկզբում հեղինակները հայտարարում են, որ սյուժեն ամբողջովին չի արտացոլում կրոնական տեքստը, այլ դրա յուրօրինակ մեկնաբանությունը կամ վերաշարադրանքն է: Իրականում, սակայն, ինչպես շատ կինոգետներ են նշում, «Եգիպտոսի արքայազնում» փորձ է արվում լիովին մեծահասակներին ուղղված պատմությունը ներկայացնել երեխաներին: Շատ կտրուկ եւ դաժան պահերը, իհարկե, մուլտֆիլմում հարթեցված են ու մեղմացված: Սակայն պահպանվել է եգիպտացիների՝ ստրուկների հանդեպ դաժան վերաբերմունքը: Մուլտֆիլմը ստեղծելիս հեղինակները, վստահաբար, ճամփորդել են Եգիպտոսով, դիտել «Լոուրենս Արաբացուն» եւ ուսումնասիրել հին եգիպտական պատկերագրությունը: Այսկերպ ստեղծվել է ճանաչելի ոճը, որը փոխանցում է հին եգիպտական մթնոլորտի ողջ էկզոտիկան: Բացի դա, սա առաջին մուլտֆիլմերից է, որտեղ կիրառված է դասական անիմացիան 3D գրաֆիկայի հետ: Հատկապես բարդ է եղել ստեղծել միջատների հարձակման ու ծովի բաժանման տեսարանները: Սակայն այդ բարդությունը փոխհատուցվել է տպավորիչ տեսարանով, որը գրավում է մինչեւ հիմա: Սա, ըստ կինոգետների եւ կինոքննադատների, պատմություն է արդարության մասին՝ ուղեկցված հիանալի երաժշտությամբ, որն էլ այն մինչեւ հիմա շարունակում է դիտարժան դարձնել:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԱՐՏՔԵՐԻ ՄԵՋ ԽԵՂԴՎՈՂ ԵՐԿՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՐՃԱՆՔՆ ՈՒ ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆԸ

«Վարչապետի ավտոշարանը հլէ տեհա, ասի՝ օհո՛, իմն էլ ըստեղ հատավ... Մի հալով աջս քաշեցի ու հո չտոռմը-զեցի: Ուղիղ տրատուարն ընկա... Այ ախպեր, տրորըմ էին, է՛, տրորըմ... Էդ ի՞նչ արագություն էին բացել, բացել եմ ասըմ՝ օդումը թռչըմ էին»:

Լոռեցի անծանոթ տաքսիստի պատմածը՝ վարչապետի ավտոշարասյան վայրագ սլացքի մասին, այսօրվա Հայաստանում արդեն սովորական պատկեր է: Հանրապետության ճանապարհներին իշխանավորների տասնյակ մեքենաներով սլացող շարասյուները վաղուց դարձել են ամենօրյա երեւույթ: Թե ուր են շտապում՝ երկրորդական է: Պարզ է, որ շտապելու բան չկա, եւ դա իրենց գոյությանը կարեւորություն տալու համար է միայն: Էականը մեկ այլ հարց է. ինչո՞ւ են աղքատ ու պարտքով բեռնված երկրի ղեկավարները շրջում այդքան թանկարժեք մեքենաներով:

Հպանցիկ ուսումնասիրությունը հանգեցնում է տխուր եզրակացության. իշխանավորների «թանկարժեք ավտոցավը» նույնքան վտանգավոր է, որքան նրանց մյուս շռայլ «ատրիբուտները» եւ իշխանավայել կյանքը, որն արդեն աչք է ծակում: Երբ պետության արտաքին պարտքը գերազանցում է 14 միլիարդ դոլարը, իշխանությունների առաջնահերթությունը պետք է լինի երկրի վաղվա օրը, ոչ թե փայլեցված թափքերը, գոլդ համարանիշներն ու հարմարավետ ավտոսրահները: Ինչո՞ւ է աղքատ պետությունը միլիոններ շռայլում ծառայողական շքեղ ավտոմեքենաների վրա: Ինչպե՞ս կարող է մի երկիր, որի քաղաքացին ձմռանը կանգնած է գազի, փայտի, սննդի ու դեղորայքի խնդրի առաջ, որի զինվորն առաջնագիծ է մեկնում հին տեխնիկայով, ուսուցիչն ու թոշակառուն ապրում են նվազագույնի հաշվարկով, իրեն թույլ տա թանկարժեք ավտոպարկի շարունակական թարմացում: Սա շռայլություն է՝ սահմանակից անբարոյականությանը:

Պետական բյուջեն իշխանությունների անձնական դրամապանակը չէ: Պաշտոնյան հանրային ծառայող է, ոչ թե ֆեոդալ: Թանկարժեք մեքենան պետական կառավարման արդյունավետության չափանիշ չէ. այն այսօր իշխանության՝ ժողովրդից կտրվածության խորհրդանիշն է: Երբ պարտքերը կուտակվում են, իսկ սոցիալական խնդիրները՝ խորանում, նման գնումները հասարակությանը հստակ ուղերձ են փոխանցում. իշխանությունն ու ժողովուրդը ապրում են տարբեր իրականություններում: Սա արժեհամակարգի հարց է: Ի՞նչ պետություն ենք կառուցում, եթե նույն իշխանությունը պետական պարտքերը կրկնապատկում է, որ շքեղ կյանքով ուժայինները հիմնականում օգտվում են համեստ, աշխատանքային անհրաժեշտությունից բխող մեքենաներից՝ Renault, Peugeot, Volkswagen, Opel: Եվրոպայում ծառայողական ավտոմեքենան ընտրվում է արդյունավետության ու տնտեսական հաշվարկի, ոչ թե շքեղության ցուցանիշով: Հայաստանում՝ հակառակը. փակ եւ կասկածելի շռայլության: Որքա՞ն է մեկ մեքենայի իրական արժեքը: Ինչո՞ւ է ընտրվել հենց այդ մոդելը: Կա՞մ արդյոք ավելի համեստ, էլի արդյունավետ այլընտրանք: Այս հարցերը մնում են անպատասխան: Պետական բյուջեն պատկանում է ժողովրդին: Այն չի պատկանում ոչ ոստիկանին, ոչ ԱԱԾ աշխատակցին, ոչ նախարարին, ոչ էլ վարչապետին ու նրա մերձավոր շրջապատին: Այն պատկանում է ժողովրդին, որը հարկ է վճարում, վարկ է վերցնում իր երկրի անունից եւ հետո նույն այդ պարտքերի բեռը կրում սեփական ուսերին: Երբ այդ ժողովրդին աշխատանք փնտրել, թոշակառուն հաշվարկում է՝ այս ամիս դե՞ղ գնի, թե՞ հաց: Պարզ է, որ 30 հազար դոլարը տարբեր արժեք ունի ուժեղ եւ թույլ տնտեսությունների, հարուստ եւ աղքատ երկրների համար: Ինչ վերաբերում է «վերեւինների» մեքենաներին, ապա այստեղ եւս բաց տվյալներ չկան: Լրագրողական հրապարակումներից հայտնի է, որ ԱԺ նախագահի BMW 750Li-ի արժեքը մոտ 90 մլն դրամ է, վարչապետի ծառայողական մեքենան գնահատվում է մոտ 300 հազար դոլար, Աննա Հակոբյանին սպասարկող ավտոմեքենան՝ մոտ 150 հազար դոլար: Վարչապետի թիկնազորի մեքենաներից յուրաքանչյուրը՝ մոտ 100 հազար դոլար, վարչապետի ավագ դստերը տրամադրված մեքենայի արժեքը մոտ 30 հազար դոլար է:

Պետությունը թույլ է տալիս շքեղություն՝ առանց բացատրության, առանց հաշվետվողականության: Երբ կառավարությունը փակ է պահում ոչ միայն իր ավտոպարկի, այլեւ այլ ծախսերի մասին կարեւոր որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը, բացահայտվում են երկրի բազմաթիվ հիմնախնդիրների չլուծվելու պատճառները. թե ինչու չեն բարձրացվում թոշակները, ինչու են կրճատվում ռազմական ծախսերը, ինչու են խորանում աղքատությունն ու սոցիալական անհավասարությունը, ինչու է իշխանությունը դառնում այդքան «քաղցր», եւ ինչու են կյանքի գնով փորձում պահել այդ իշխանությունը:

Աղքատ պետությունը շքեղություն չի կարող իրեն թույլ տալ: Իսկ եթե, լինելով պարտքերի մեջ խրված, իշխանությունն ընտրում է շքեղ ապրելակերպը, դա այլեւս պարզապես սխալ չէ. դա անբարոյականություն է:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 29.01.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՆԻԿՈԼԸ ՊԵՏՔ Է ՀԵՌԱՆԱ ՈՉ ԹԵ ԱՐԱԾՆԵՐԻ, ԱՅԼ ՉԱՐԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երբ լսում ես Նիկոլի եւ նիկոլականների խոսույթում առկա այդքան շատ ադրբեջանականությունն ու թրքասիրությունը, ակամայից մտածում ես, որ սրանք Հայաստանի խնդիրներից ավելի շատ Արեւմտյան Ադրբեջան կառուցելու մասին են մտածում: Այնինչ, ինչպես Նիկոլի ու նիկոլականների, այնպես էլ այսօրվա հայկական իրականության խնդիրները ոչ թե Արեւմտյան Ադրբեջան կառուցելու թուրք-ադրբեջանական տանդեմի վճռականությունից, այլ սեփական խնդիրները հասկանալու մեր անկարողությունից են գալիս: Հայաստանի այսօրվա խնդիրները ո՛չ Ադրբեջանից հնչող սպառնալիքները եւ ո՛չ էլ Թուրքիայից եկող ճնշումներն են: Դրանք Նիկոլին ու նիկոլականներին իշխանությունից հեռացնել չկարողանալուց ու այլեւս երբեք Հայաստանն Արեւմտյան Ադրբեջանի հետ շփոթող իշխանություն թույլ տալ չկարողանալուց են գալիս:

Այո, առաջնային խնդիրը Նիկոլին ու նիկոլականներին իշխանությունից հեռացնելն է, սակայն կարեւոր է նրանք իշխանությունից պետք է հեռացվեն ոչ թե այն պատճառով, թե ինչն են արդեն արել, այլ՝ այն, թե ինչն այսօր պետք է անեն, բայց չեն անում: Իշխանությունից պետք է հեռացվեն՝ սահմաններում Հայաստանի տարածքային ամբողջականության շրջանակներում խաղաղություն, իսկ երկրի ներսում համերաշխություն ու հանդուրժողականություն չհաստատելու համար: Պետք է հեռացվեն՝ երկրի տնտեսությունը չարդյունաբերականացնելու, գյուղատնտեսությունը ժամանակակից գյուղատնտեսություն չդարձնելու, տեխնոլոգիականացված ռազմարդյունաբերություն չհիմնելու, բանակը երկրին սպառնացող ապրի եւ հարուստ պետությունների պաշտոնյաներից շատ ավելի շռայլ ծախսեր անի իր կեցության, հագուկապի, պաշտպանության, տեղափոխման վրա:

Հատկանշական է, որ Հայաստանում ուժային կառույցների, իշխանությունների տարբեր ծախսերի եւ հատկապես՝ ավտոպարկի վերաբերյալ ամբողջական եւ բաց տեղեկատվություն գրեթե գոյություն չունի: Չկան հրապարակային ցուցակներ, գնման հիմնավորումներ, հստակ բացատրություններ: Իսկ երբ հանրային փողը ծախսվում է գաղտնիության պայմաններում, դա արդեն հաշվետվողականության լուրջ խնդիր է, կոռուպցիոն ռիսկեր: Մինչդեռ շատ ավելի հարուստ երկրներում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, ոստիկանությունն ու ուժայինները հիմնականում օգտվում են համեստ, աշխատանքային անհրաժեշտությունից բխող մեքենաներից՝ Renault, Peugeot, Volkswagen, Opel: Եվրոպայում ծառայողական ավտոմեքենան ընտրվում է արդյունավետության ու տնտեսական հաշվարկի, ոչ թե շքեղության ցուցանիշով: Հայաստանում՝ հակառակը. փակ եւ կասկածելի շռայլության: Որքա՞ն է մեկ մեքենայի իրական արժեքը: Ինչո՞ւ է ընտրվել հենց այդ մոդելը: Կա՞մ արդյոք ավելի համեստ, էլի արդյունավետ այլընտրանք: Այս հարցերը մնում են անպատասխան: Պետական բյուջեն պատկանում է ժողովրդին: Այն չի պատկանում ոչ ոստիկանին, ոչ ԱԱԾ աշխատակցին, ոչ նախարարին, ոչ էլ վարչապետին ու նրա մերձավոր շրջապատին: Այն պատկանում է ժողովրդին, որը հարկ է վճարում, վարկ է վերցնում իր երկրի անունից եւ հետո նույն այդ պարտքերի բեռը կրում սեփական ուսերին: Երբ այդ ժողովրդին չեն բացատրում, թե ինչու են իր վճարած հարկերով գնվում շքեղ մեքենաներ, դա հիշեցնում է ոչ թե անվտանգության ապահովում, այլ իշխանական ինքնահաստատում: Առավել ցինիկ է այն, որ երբեմն նույն այդ մեքենաներով քաղաքացուն բերման են ենթարկում՝ իր սահմանադրական իրավունքներն իրացնելու, հանրահավաք ու բողոքի ակցիա անելու համար:

Թվերը խոսուն են: Հայաստանում որոշ ծառայողական մեքենաների միջին արժեքը 14-15 միլիոն դրամ է, որը համարժեք է ուսուցչի 6-7 տարվա աշխատավարձին, թոշակառուի շուրջ 30 տարվա թոշակին: Սա պետական առաջնահերթությունների մերկ ցուցադրություն է: Երբ նույն դպրոցներում դասասենյակները ջեռուցված չեն, ուսուցիչները ստիպված են երկրորդ աշխատանք փնտրել, թոշակառուն հաշվարկում է՝ այս ամիս դե՞ղ գնի, թե՞ հաց: Պարզ է, որ 30 հազար դոլարը տարբեր արժեք ունի ուժեղ եւ թույլ տնտեսությունների, հարուստ եւ աղքատ երկրների համար: Ինչ վերաբերում է «վերեւինների» մեքենաներին, ապա այստեղ եւս բաց տվյալներ չկան: Լրագրողական հրապարակումներից հայտնի է, որ ԱԺ նախագահի BMW 750Li-ի արժեքը մոտ 90 մլն դրամ է, վարչապետի ծառայողական մեքենան գնահատվում է մոտ 300 հազար դոլար, Աննա Հակոբյանին սպասարկող ավտոմեքենան՝ մոտ 150 հազար դոլար: Վարչապետի թիկնազորի մեքենաներից յուրաքանչյուրը՝ մոտ 100 հազար դոլար, վարչապետի ավագ դստերը տրամադրված մեքենայի արժեքը մոտ 30 հազար դոլար է:

Պետությունը թույլ է տալիս շքեղություն՝ առանց բացատրության, առանց հաշվետվողականության: Երբ կառավարությունը փակ է պահում ոչ միայն իր ավտոպարկի, այլեւ այլ ծախսերի մասին կարեւոր որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը, բացահայտվում են երկրի բազմաթիվ հիմնախնդիրների չլուծվելու պատճառները. թե ինչու չեն բարձրացվում թոշակները, ինչու են կրճատվում ռազմական ծախսերը, ինչու են խորանում աղքատությունն ու սոցիալական անհավասարությունը, ինչու է իշխանությունը դառնում այդքան «քաղցր», եւ ինչու են կյանքի գնով փորձում պահել այդ իշխանությունը:

Աղքատ պետությունը շքեղություն չի կարող իրեն թույլ տալ: Իսկ եթե, լինելով պարտքերի մեջ խրված, իշխանությունն ընտրում է շքեղ ապրելակերպը, դա այլեւս պարզապես սխալ չէ. դա անբարոյականություն է:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am